ԱՐԱՐԱՉ

ԿՐԹՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳԱՍՏԱԿԱՆ,
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Լ. ՏԱՐԻ ԻԴ. ՑՈՒԼԻՍ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ. Ցեխովի Գրքասեռի մի ուշագրաւութեան ազդանշանը (շարունակելի) . . 337
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ. Գրիգոր Նարեկացին բազմայոյզ խոհերի մէջ (կը շարունակուի) . . . 354
Խորենացւոյ պատմութեան աղբիւրագիտական քննութեան (շարունակելի) . . 384
ԱԶԳԱՅԻՆ. Նոր հրատարակութիւններ . . 393

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՐՄՆՑ ԿԱԹՈՒՂԻԿԻ ԷՋՄԻԱԾՆԻ.
1891

ՑՈՒՑԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ·
Ա յրիվանք կամ Վեղարդավանք·	—	10
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենայիր տարեկան ամսագիր կազմեալ·	2	—
Արաքսի աւազանը, Ուրմիա լիճ և առաջաւոր Ասիա		50
* Աւետարան Համաբարբառ վկայութիւնամբ	—	80
* Բէնիամին Ֆրանկլինի կեանքը	—	20
Գիրք հանդիսակատարութեանց կայսերական տօնից	—	50
* Գոհութիւն ողբերգութիւն	1	—
Գատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Գաշնագիր	—	10
Գատագիրք լաղէտական Աշխարհագրութեան		50
Գատագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	—	50
Նոյն.—Միջին դարուց	—	50
Գատագիրք Քրիստոնէական հաւատոյ· Արեւել Նպիսկոպոսի	—	10
Գատագիրք Քրիստ· վարդապետութեան Գ· Ե· Ա յվազեան	—	10
Գպրոց տարեկան 1874—76	2	—
Եօթն խոսք առ տղայս	—	20
Թուաբանութիւն գարգացեալ Ա· Գալֆայեան	1	—
* Ժամագիրք առինի	8	—
* Ժամագիրք ձեռաց	2	—
Լսարան Աւագ սրբոյն	—	10
Լսարան Վ· Պօղոսի	—	10
Ալև	—	10
Զատիկ տեառն	—	10
Երկինք և երկնային	—	10
Հոխոխմէ	—	10
Հնութիւնք Նպիսկոպոսի	—	10
Մեծն Ներսէս	—	10
Ս· Խաչ	—	10
Տօն Ծննդեան	—	10
Խանգարմունք Հայկաբանութեան	—	20
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	20
Կանոն աշակերտաց Վէտրոսեան Հնմարանի	—	5
Կանոն ընկերութեան Հայոց Ճառագի	—	10
Կանոն Ծխական Գպրոցաց	—	20



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Լ· — ԵՐՋԱՆ ԻԳ· 1891 ՏԱՐԻ ԻԴ· ՅՈՒԼԻՍ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԵՐԹՆԻՔԸ

ՊԱՏԱՄԱՒՈՐԸ Ի· ՕԻՆԱՆԻՆԵԻ Լ· ՏՕԼՍՏՕՅԻՆ

ՔԵՔՄԵՔԻ ՔԱՐԱՋՆԵՔԻՑ [1])

Ա սէ ցնա Պղատոս· Ապա այրեաց իցէ՛ թագաւոր ամն ես դու· Պատասխանի ետ Ցիսուս՝ դու ասես՝ Թէ թագաւոր իցեմ·
(ՑովՀ· ԺԸ· 37)·

Պատմուվթիւնը չէ պարտական մեզ Հաւատալ մի ապիրատ սուտ եւ պատկերի պատմախօսուվթիւն՝ քան այս Հակիրճ, բայց խարտեաշ խօսքերը·

---

1) Ֆրանսիացի աստուածաբան քարոզչի անունը, որ Եւրոպական Հրատարակ է վայելում՝ անյայտ չէ մեր ընթերցողներին·

որ աւագ ուրբաթ օրը Եղուսաղէմում Հռոմէական պատուարի ապարանում տեղ էին միմեանց պնուսարի Պիղատոսն և Յիսուս Ն. իսուսը։

Նախախնամութեան չաճոյ էր եղել, որ պատմական այդ խորհրդաւոր օրին՝ գէմ յանդիման կանգնէին երկու գօրութիւններ.— մի կողմից՝ ներկայացուչին և այն իսկոյն այժմ, որի նմանը չտեսիւ թէ երբ և իյէ ծանրացած էր երկրի վրայ՝—Հռոմէական աշխարհակալութեան փոխ-հիւպատոսը՝ միւս կողմից՝ նախատինքից կարծած և տանջանքների ակտրատած՝ այն եղկելի Գալիլէացին, որին անուանում էին Յիսուս Նազարեցի։ Երկու տիրապետական ոյժեր, որոց միջև էր եւեթ իրերի միւսը՝ չոգևոր առաքեալների ուրացութիւնն էր, միւսին պատկանում են ապագայն և յաւիտենականութիւնը։

Մենք կամենում ենք Աստուծոյ օգնութեամբ քննել Յիսուսի

Ընդի առաջ անելով՝ որ ներկայ քարոզի բովանդակութիւնն անմիջապէս ուղղուած է այն մոլար ու չակաեկիզեցական վարպետութեան դէմ՝ որ վերջին ժամանակներում աստակութեամբ ու արագութեամբ տարածուում է Ռուսիոյ գաւառական քաղաքների բոլոր շերտերի մէջ կոմս Լ. Տօլստոյի անուան կախարդանքի ոյժով և պարբերական մամուլի թեթեւամիտ նպաստով՝ կարծում ենք՝ որ ամեն խոհական մարդ կը գնահատէ ներկայ քարոզի թարգմանութեան անհրաժեշտ կարևորութիւնը։ Այդ քարոզը արդէն թարգմանուած է ռուսերէն (Прав. Обозр. 1889 г. Апр. 14.) և նորա պարբերական մամուլը մատենախօսական անսութեան մէջ ըստ արժանոյն գնահատել է այդ թարգմանութեան նշանակութիւնը։ Կրօնական տատանմունքի մէջ գտնուող մարդի համար աւելորդ չէ, ընդհակառակը շատ օգտակար՝ եթէ մտադիր հաճութեամբ ունկնդիր լինի համոզիչ քարոզիչի կշռադատութիւններին, մանաւանդ որ նորա ոճն, ինչպէս բոլոր քարոզների մէջ, այնպէս էլ այստեղ կենդանի է, պայծառ և ամենքի համար դիւրըմբռնելի։ Audietur et altera pars! Լ. Տօլստոյի և նմանեաց վարդապետութիւններով չափշտակուած անձինք՝ կարծում ենք, տակաւին չափշտակութեան այն աստիճանին հասած չեն, որ այս իմաստուն կանոնի պարտաւորիչ լինելն էլ ուրանան։

Հաւատի գաղափարին տակ պատահականը։ Մենք այս տողերս կը բանանք՝ թէ ի՞նչ իմաստ ունէր այն իրաւախոհութիւնն, որ Ցիտա Քրիստոս յայտնեալ էր «Միագահար իրեն» պատահականով։

Ցետոյ կը տեսնենք՝ թէ ինչպէս իրագործուեց այս իրաւախոհութիւնը գարերի ընթացքում և ինչպէս այժմ իրագործուում է։

Մի կարգ տղնտական մարդիկ, որոնք ջանք են անում քրիստոնէութեան տալել և որոնց անկեղծութիւնը ս մենք մեր մէջ կասկած չենք յայտնում, կարծում են թէ՝ կարող են քրիստոնէութիւնը ժամանակակից մարդկանց համար տեսի դիր ընդունելի դարձնել, եթէ կարողանան այդ ուսումը պարզրակել պատմական իրողութեան տարրերի մէջ, այսինքն՝ ընդունել տալ որպէս արդարիք մարդկութեան կրօնական ղեկավարութիւն։ Նրանց տեսակէտով Քրիստոսի պատկերը այնքան ուսումնասիրել կը պարտէր մարդկանց յարգանք և համակրութիւն, որքան նա տակաւ ներկայանար մեզ գերբնական ճագումի ու զօրութեան վայրկ։

«Թողէք զ, ասում են նորա՝ այդ հրաշապատում պոյծները, որոնց չեռ իւր հաշիւն պրպտելն վերջացրել է պղտի նորագոյն քննութեանը, և որոնք վերջապէս բոլորովին համոզում են մեր մտքին, որ կրճատել է պատկան պիտութիւնների խիստ մեծութիւն։ Մի՛ նեղուիր յայտնէք այլ ևս Քրիստոսին այնպէս, ինչպէս նա ձեզ երևում է, այսինքն այն կերպարանքով, որով պատկերացրել է Նրան Նչան աշակերտների յաւիտենական հիացմունքը.—իբր յարուցեալ Համբարձեալ յերկինս, նստեալ ընդ աջմէ Հօր և երկրպագութեան առարկայ, որ չունեցել է մեհեան Աստուածուն։ Եւ դուք իսկապէս ի՞նչ կը կորցնէք, այսպէս վարուելով։ Քրիստոսին կը մնայ է ի մեծ մեծ մարդարէից բանականութեան կրօնի քարոզչի, Աստուածային ալքայութեան և մարդկային եղբայրութեան աւետարանչի միակ փառքը։ Միևնոյն մնացած մարդու սրտոյ մէջ, նա զգացել է, որ իւր պատուոյ քարբերութեամբ աստուածային սրբեգրութեան հաստատութիւնը։ Նա տեսել է Աստուածն նրա յաղթական անունը՝—Հայր։ Նա հաստատուել Աստուած ու մարդու մէջ այն ճշմարիտ յարաբերութիւնն, որ սրծաքանում է մեր հոգու մէջ անձնանուէր հաւատս ու սէր։ Այդ թէ ի՞նչ ա-

ճառով նա մեզ համար միշտ է և կը լինի ուսուցիչ և օրինակ։ «Աստուածութեան» մասին նրա քարոզած աքանչելի վարդապետութեան, նրա յ՛աւետ առակների և յերջանկ իւր չարչարանքների ու մահուան փառաւոր հանդէսի մէջ նա ցոյց կը տայ մեզ՝ թէ ինչ է մարդկային կեանքն, եթէ դա համակուած է աստուածային սիրով. և այս օրինակը այն չափով աւելի հրապուրիչ կը լինի մեզ համար, որ չափով որ մեզ ճշմարիտ եղբայր դարձած Քրիստոսը առկաս կերևի մեզ առասպելական դրայցների շլացուցիչ վայելուչ, և ոչքան որ մենք աւելի նրա մէջ կը տեսնենք Մարդու Որդի, որ կրում է իւր մէջ այն ձգտումներն, ինչ որ տածում ենք մենք մեր մէջ, և իւր բարձր բարոյական առաքինութիւններով ժառանգում է Աստուծու որդու անունը և արժանաւորութիւնը»։

Ա՛յսպիսի են, եղբայրք, այն պատասխանութիւնները, որ մենք ամենքս լսում ենք՝ և որ, բոլորովին անկեղծ մարդոց բերանով յայտնած լինելով, մեզ համար էլ անհեաք չէ անցնում, որովհետև այնպիսի շփոթեալ ժամանակներում, ինչպիսին մեր արդի ժամանակն է, երբ այնքան բազմաթիւ մարդիկ առանց արհամարհանքով երես են դարձնում յաւիտենական յոյսից, հարկաւ մի կշիռ և այն մեծ կշիռ ունի, որ ճանաչում են Քրիստոսին իբրև վարդապետ կրօնական ճշմարտութեան։ Այդ պատճառով այդպէս պատասխանել մենք չենք պատասխանել ինքնաբաւական ոճով և խրատիչ հաստատութեամբ այն ուղղափառութեան, որ ինքն իրան անսխալական է համարում։ Սակայն բոլորեքեան կը համաձայնեն թէ՝ մենք ամենևին կայր կը լինէինք, եթէ չընդունէինք ահագին նշանակութիւնն այն դիջողութիւնների, որ մեզանից պահանջում են բանականութեան կրօնի արբանեակները։ Խնդիրն այն է, որ իմանալի թէ՝ արդեօք քրիստոնէութիւնը աստուածային պարգև է՝ մարդկութեան ի վերուստ շնորհուած, թէ մարդկային խղճի գերագոյն արտադրութիւնն է։ Փոխանակ բոլոր եկեղեցու հետ Յիսուս Քրիստոսի մէջ տեսնելու աստուածութիւնն, որ իջել է երկնից մարդու կերպարանքով, մեզ առաջարկում են տեսնել նորա մէջ աստուածացեալ մարդկութիւն, որովհետև նոյա ասելով առաջին անգամ նորա մէջ է յայտնուած մարդկայ-

նութիւնը, աստուածութեան կատարեալ սիրապետութեամբ։

Նոքա կարծում են, թէ այդ գնով կարող են վրկել քրիստոնէութիւնը. մենք կը պատասխանենք նրանց խորին համոզմունքի զօրութեամբ, նախ՝ որ նոցա ֆաթալիզմը անչափ մեծ է. երկրորդ՝ որ նրանց ցիտատ Քրիստոսը, որ պարխակատաճ է զատ մարդկային ըմբռնողութեան սահմաններից մէջ, աւաւել անհասկանալի էակ է, քան մերն, որին նոքա հերքում են։

Նա ասացի նոցա ֆաթալիզմը և ես կը բացատրեմ այդ։ Արդարև նոցա խօսքն ու հաւատը չէ արդեօք, թէ Աստուածն, եթէ մարդուն բոլոր գերբնական ատրիներից և վերադասնայ մեղ բարոյական կեանքի պարզ գծերով, ինչպէս գծագրուած է երանութեանց վարդապետութեան մէջ՝ այնուհետև նա աւելի կը գրաւէ մարդուս խիղճն և այլ ևս չի յարուցանիլ իւր դէմ բանականութեան վրդովմունքը։

Եթէ այդպէս է՝ ես դառնում եմ իմ ունկնդիրներիս, որոնք պնդում են ժամանակակից մարքի շարժման ընթացքն։ Ուղիղ է արդեօք, որ այդպէս պատանցողների անկեղծութիւնը կատարուում է գնել մի որոշ չափով։ Ո՞ւր են այն նոքահատանները, որոնք չընդունդանդուելիս լինելին նոքաքարոզ Աւետարանին։ Ո՞ւր են այն մտածողները, որոնց նա բանականութիւն տալ այն քանում որ զսպում է նոցա կրքերն և խաղաղութիւն է պարգևում նոցա մարքին ու սրտին։

Այդ ես չեմ նկատում։ բայց ակներև տեսնում եմ, որ ներկայ ժամանակում աւելի խոտութեամբ և արհամարհանքով յարձակուում են նոյն իսկ այն աշխարհայեցողութեան վրայ, որի գերագոյն արտայայտութիւնը երանութեան հանրամատչելի վարդապետութիւնն է [1]։ Չարչրեք մեր դրականներին (պոզիտիվիստ)։ Ի հարկէ իմ խօսքը նոցա մասին չէ, որոնք գիտութեան խորշերում անազդելի սրամտաբանութեամբ մակաբերում են իրանց հե-

---

1) Երանութեան վարդապետութիւն ասելով անշուշտ ընթերցողը հասկանում է, որ մեր խօսքը այն աքանչելի ուսման մասին է, որ Յիսուս սարի վերայ քարոզել էր Իւր աշակերտներին (Մատ. Ե., Զ. և Է.)։

ռեւած սիտեմի եպրակայութիւններըս, իմ՝ ամենակը վերաբերում է ոչ միայն ճատախոսներին, որոնցից անցեալներում մի ճոռ չեմ, որ բուռն ծափահարութեամբ ընդունելութիւն գտած փաբիզի բանաստեղծի կոմիզ։ Հարցրեցէք նրանց, թէ ինչ են միտածում Աստուածաշնչին նախանձանութեան մասին, որ կերակրում է երկնքի թռչուններին, զարդարում է գաշտի շուշանն, որ հագցնում է մեր գլխի մազերն և որին պիտի ազօթէ մեր մանկական սիրալի սրտով հաստատ։ Հարցրեցէք նրանց՝ թէ ինչ կարծիք ունին նրանք երանելութեան մասին։ Հարցրէք նրանց, այդ նոր աստուածներին, որոնք քարոզում են թէ մտպգիայինի փրկութիւնը մակացութեան միջնորդութեամբ է, ինչպէս նայում են նորա հոգով աղքատներին աստած խոստման վրայ։ Հարցրեցէք այդ քաղաքագէտներին թէ՝ ինչ հայեացք ունին նորա այն յաղթանակի վրայ, որ խոստացուած է հեզերին։ Հարցրէք այդ հասարակապետական յեղափոխիչներին՝ թէ ինչպիսի վէրնա կատն իրանք այն մշանջենական մարգի մասին, որ խոստացած է ճշմարտութեան համար անարգուածներին ու հալածուածներին։—և երբ գուք կը ժողովէք նրանց բարկութեամբ ու արհամարհանքով ստացուած պատասխաններն, եկէք և ասացէք ինձ թէ՝ արդեօք բաւական է ապաստել խոչի չիմնարկութիւնից և գերբնական քրիստոնէութիւնից, որպէս զի ապագայ սերունդները նկատեն Աստուածին։

Բայց ես իրաւունք ունիմ ասելու, որ նորա մնատպողները, որ նա հերքում եմ, շատ խոչն է։ Ես մինչև անգամ աւելացնում եմ թէ՝ նորա Քրիստոսն, որ ստացուածում են մեզ, երևակայական Քրիստոս է, որին պատմութիւնը չէ ճանաչում։ Երբ որ կամենում են իմանալ՝ ո՞վ էր Քրիստոսը՝ հարկաւոր է ամենից առաջ հարցնել նոյն իսկ նրան Քրիստոսին։ Լսենք ուրեմն նորա վկայութիւնը՝ դարձնենք նրա մեր ուշադրութիւնն և որպէս զի անեզմիտ լինինք, որ մենք անձնատուր չենք նորա աշակերտների յանիշատակութեան, մենք՝ եթէ կամենում էք, չենք հարցնիլ ոչ Պօղոս առաքեալին։—թէև սորա թղթերը անվիճելի ոսուգութեան ունենալով՝ ակզբնական քրիստոնէութեան պատմական հա-

առաքեն են—և ոչ Ս. Յովհաննէսին կամ Նորա աշակերտներին, որոնց խորհրդաբանական (միստիքական) պատմագրութիւնը առած են իբր թէ խլեցնելով Քրիստոսին.—Ոչ. մենք պահոց կը թողնենք. մենք կը հետևենք առաջին երեք Աւետարանիչներին, որոնք իսկապես պատգամներ են Քրիստոսի քարոզութեան՝ Գալիլիայում և Նորա հաչախորդ մնալուն նուաստացման: Գուք այս ամենը ճանաչել էք արդէն և ես պիտի՝ հէնց այս սկզբնական տպաւորութեան որ ստացեր եղութիւնից չէ ոչ մի քննական վերլուծութիւն:

Պէտք է՞ արդեօք որ Քրիստոսը, ինչպէս նկարագրուած է առաջին երեք աւետարանական պատմութեանց մէջ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հէգ խորհրդապաշտ որ իբր թէ բարոյական մնքատմունքներով և հին մարգարէներին ուսումնասիրելով հասած է այն վիճակին, որ սկսել է ղգալ թէ Նորա պատմ բարերարութեան առաքելական արդիւնքութեան և մարդկային եղբայրութեան հաստատիքը և իբր Հանճարի անքան ուրիութեամբ պարզում է այն մեծագոյն երևոյթին, որ կոչուած է Առաքելական Քրիստոսութիւն: Ես չեմ նախատեսնում ձեր պատասխանը, սակայն ասեմ. իմ հայեցողով՝ ինչպէս Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասի Քրիստոսը, այնպէս էլ Յովհաննու և Պօղոսի Քրիստոսը այն էակն է, որ իբր յայտնութիւն օրէնք խօսում է ու գործում է արբայութիւն: Այս է, որ ես կամենում եմ ցոյց տալ:

Առաքելականը մեր առարկան: Այն շրջանն, պատկ ներգործում է Յիսուս Քրիստոս—բացառապէս կրօնական է: Ամեն դէպքում՝ գործում է թէ քարոզում է՝ նա ըմբռնած է միայն մարդու առաքած և առ ընկերն ունեցած յարաբերութիւնները պարզելով: Դա չէ շօշափում ոչ ընկերաբարոյական և ոչ քաղաքական հարցերը: Դա երբէք չէ խոսնուում ոչ երկրատոր ու անցատոր առարկաների և ոչ էլ մնկայական հնմնարութիւնների մէջ, որոնք բոլորը Դա թողնում է մարդուս ազատ իւրացութեան: Եւ այս (հարևանցի կերպով ասում եմ) Նորա համար է, որովհետև Աւետարանը ոչինչ դաշն չէ կռել այդ կարգի գործերի հետ և ամենևին չէ կռշտանգել իրան ոչ մի տեսակ ընկերաբարոյական—քա-

զաքական դրութեան, կամ մի որ և իցէ տիեզերախօսական և փիլիսոփայական վարդապետութեան հետ։ Նա միայն ցոյց է տուել, թէ մարդը ինքն իւր անձի տէրն է այն բաներում, որ նրա համար խորին ու էական կարևորութիւն ունի, և թէ ինքն Աստուածը կարող է յարմարուել ամեն ժամանակի և ամեն տպաւորին—նա համաշխարհական է և միշտ գործող։ Սակայն երբ ես ասում եմ, թէ Յիսուս Քրիստոս թագաւորութեան իրաւահիմքը ունէր իմ խօսքս ոչ ժամանակաւոր կարգերի թագաւորութեան մասին է և ոչ էլ մնաւոր դրութիւնների իշխանակիցութեան վերայ է։ Հարկաւոր է, ինչպէս ասում է Պաւղոսը՝ խոյանալ աւելի վեր աւելի բարձր, քան թէ Աղէքսանդրների ու Ալբիմեդների իշխած ոլորտն է, և աստանել բարոյական ու կրօնական եղերքն մէջ։ Ահա թէ ո՛րտեղ Քրիստոսը ներկայանում է ինձ թագաւոր։

Նա թագաւոր է այն ձևերի մէջ, որով վարդապետում է իւր ուսումն, որով գաղտում է խիղճը, որով ղինքը պատերի վրայ իշխան է կարգում։ և վերջապէս նա թագաւորում է գերբնական զօրութեան արտայայտութիւնների մէջ։ Ա՛յս չորս կէտից մենք կուսումնասիրենք նրան։

Ա.

Նախ և առաջ լսենք նորան, երբ նա ուսուցանում է։ Համեմատեցէք նորա դրութիւնը ամենամեծ փիլիսոփաների, օրինակ, Սոկրատեսի դրութեան հետ։ Յայտնի է ձ. ձ. Ռուսօի պատճ հաչակաւոր համեմատութիւնը Սոկրատեսի ու Քրիստոսի մէջ։ Միմիայն մի կէտում այդ համեմատութիւնը սխալ է։ Նաղովրեցի Յիսուսի մահն իբրև թէ Աթենացի իմաստասէրի մահից աւելի անխռով չէր։ Մահուան ապտնապի մասին խօսք բանալու տեղ չէ Գողգոթայի խաչի առաջ, երբ նորա վերայ պատահել էր մեռնող փրկչի ողաղակը՝ «Էլի, Էլի, լամա սաբաքանի»։ Համարձակուում եմ միևնոյն անգամ ասել, որ Յիսուս Քրիստոսի մահը լի էր նուաստմամբ։ Սակայն այդ նուաստումը հաւատացեալների համար գարձաւ մշտնջենական աղբիւր անապատ խաղաղութեան։ Ա՛յս տեսակէ-

սիյ ժ· ժ· Աստուծո ապած Համեմատութիւնը անընդունելի է։ Միայն ինչ որ վերաբերում է Սակրատեսի ուսման և Քրիստոսի քարոզութեան՝—նրանց սքանչելի է այդ Համեմատութիւնն։

Սակրատէսը մտոք էր, որ ճանաչել է իւր տգիտութեան չափը և որ արդար խղճի ու բարի դգայնութեամբ Հանճար աստուծով ջանք է անում գտնել իւր կոչման օրէնքները։

Ի՞նչ է անում նա այս բանի Համար։

Նա պնում է, վերլուծում է մարդկային գործողութիւնները և նրանց շարժող պատճառները։ Խնդասիրների մտաստեղծութեանց տղէյութեան տակ նա որոնում է բարոյական օրէնքները և ժողովում է այն նիւթերն, որոնց հրայ Նորա Պղատոն աշակերտի կարող Հանճարը հիմնում է մի զարմանալի փիլիսոփայական յօրինուածք, սիստեմա, որը թէև լի է ճարտար ենթադրութիւններով, որոնիա աստրատութիւններով և երևակայութեան նուրանշան պատկերներով՝ այսու Հանդերձ այդ Հանճարեղ յօրինուածքը—փիլիսոփայութիւն ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն վերին տրտատրութիւն մարդկային բանաստիրութեան, որ ջանք է անում ըմբռնել անսահմանելին։

Սակրատիչ յետոյ լսեցէք Յիսուս Քրիստոսին։ Ո՞ւր է Նորա մէջ քննող բանականութեան տքնութիւնը։ Նորա սիր քարոզի մէջ դուք նկատում էք մտքի աշխատութեան հետքեր,—մտքի՝ որ ձգտում լինէր ճշմարտութեան Հասնել։ Ո՞ւր են տատանմունքը, ենթադրութիւններն, երկբայութիւնների տակ նուաղիլն, որոնք սովորական են մտածուս Համար՝ խորին Համոզմունքների չլսութեան ժամանակ, և որոնք տագնապում են միտքը մինչև անգամ այդ Համոզմունքների գոյութեան նկատմամբ։ Յիսուս Քրիստոսը հէնց տասջին խօսքերում Հաստատում է, երբէք Նորա խօսքը չէ բարձրանում երկրի վերայ՝ որպէս գերագոյն արտատրութիւն անհատ Հոգու աշխատութեան։ Նա միշտ երկնքից վայր է իջնում յայտնութեան հեղինակութիւնով։ Նայն իսկ հեղինակութեան այս ոճն ապշեցրել է ամենքին քարոզի ներան վրայ աշակերտների խումբն և այդ ոճն է, որ դարերի ընթացքում մնում է իբրև Նորա իշխող յատկանիշը։

ինչ որ վերաբերում է Աստուածուն, նորա բնութեան, նորա արքութեան, մարդասիրութեան, հշմարիտ պաշտամանն, որ մարդիկ պարտ են նորան մատուցանել, ինչ որ վերաբերում է մարգոնն, նորա հոգու մշտական ապրելքին, նեղքին ու հոգևոր հնազանդութեան, արդարութեան ու սիրոյ օրէնքներին, որ ուխտի շաղկապէ միմեանց հետ բոլոր էակներին, և վերջապէս ինչ որ վերաբերում է հանգերձեալ կեանքին, և վերջին հատուցման,— այս բոլոր առարկաների մասին Յիսուս Քրիստոս խօսում է ուսուցչի ոճով և գոյանիշ ամեն մէկի վերաբերմամբ տալիս է այնպիսի հշմարիտ ու որոշ վճիռ, որ ալեհագանիք է գտնում մարգկային խղճի ամենախորին խորքերում ամեն ժամանակ, ամեն ազգերի մէջ և երկրագնտիս ամեն մի կէտի վրայ։

Կասկած չը կայ, որ մեղ կը պատասխանեն թէ՝ Խորայէլի Որդու բերնում այդ սեռակ հեզինակական ոճը մի օտար բան չէր և թէ՝ չկարելի պահանջել ոչ փիլիսոփայական ճառ և ոչ տրամախոհական վերածանգութիւններ այն ցեղից, որ բացառապէս զատուկ էր օրէնքի ու մարգարէների ազգութեան նեղքոյ։ Ընդունենք թէ այդ դիտողութիւնը հիմնատար է, և համեմատենք Յիսուս Քրիստոսին՝ երբ նա ուսուցանում է, ոչ թէ Հելլենացիների ամենահռչակի հետ, այլ Խորայէլի մի ուրիշ որդու հետ, որին մենք քրիստոնեութեան համարում ենք հոգեշունչ, և որ ինքն էլ անտարմանը եռանդով հաստատում էր իւր հոգեշնչութեան,— օրէնքի ու մարգարէների այն նախանձախնդիր աշակերտի հետ, որ կոչուում էր Սօղոս Տարսոնացի։

Եթէ եղել է երբ և իչէ մի մարդ, որ խորին ու անսասան համոզմունք է ունեցել իւր առաքելական կոչման մասին և իւր հաստատ պաշտամանն մէջ դրել է մի հրատապ ու անբիծ հոգի՝— դա Տարսոնացի Սօղոսն է։ Նորա գործունէութիւնն այնպէս մեծ էր, որ վերջերում անհնար միտքը անգամ աշխատում էին յատկացնել Նորան մի փառք— որ Նորա աչքում անհերելի հայհոյութիւն էր՝— այն է՝ քրիստոնէութեան իսկական հիմնադրի փառքը։ Բայց երբ որ կամենում են համեմատել Նորան իւր ընտրչի հետ՝ թող չասեն այն սարսափելիներն, որ բամբանում է մէկին միւսից։ Մի ծայրում

կանգնած է Նա, որ Տէրն է ճշմարտութեան, այնպէս որ կարող ես ասել «Ես եմ ճշմարտութիւն», միւս ծայրում կանգնած է Նա, որի վրայ իշխում է ճշմարտութիւնը և իշխում է այնպէս, որ կարող էր գառնալ Նարա ամենաեռանդուն ուսուցիչը:

Այժմ, հենց այս աստիճանի մէջ կարող ենք ուսումնասիրել այն նեղքին աշխարհիկը, մանաւանդ նուաստումը և հոգևոր եղերերգութիւնն, որ իրար սրանում են Յիսուս Քրիստոսի մէջ: Կարգայէք Նարա թղթերն, որոնց մէջ ինքնաբացութիւնն, ենթակայականութիւնն և խանգրը ամենևին երաշխաւորում են նոցա հաստատուն լինելը: Նայեցէք նոցա անհարթ դադրումն և բազմիցս ոչ կանոնաւոր ձևին, անմշակ նախադասութիւններին և վերջապէս իմաստների շարադարութեան, որ կարծես զօրանջում է իսկ և իսկ որպէս մի անօթ, որ չէ կարողանում պահել նոր գինին, եռում է և դուրս է թափւում — ես ճշմարիտ է՝ զգում եմ մի աստուածաշունչ հոգի, բայց անկարող է աւազ զգում եմ մարդու հոգի, որ ճիգն է դնում հաղորդել իւր լեզուով Աստուածութեան մեծ գործերը: Հարկաւ ես խոնարհում եմ աւետարանի հատուածի վրայի գրութիւնը, բայց միևնոյն ժամանակ նոյն իսկ աւետարանի հետ ես ծանր եմ զգում Նարա աւազ, Երեն ինքը Փօղոսը կշտամբէ Տէր և վարդապետ Նարա աւազ, որ հին աստուածական օրէնքին դէմ գնում է իւր հերետիկութիւնն և որ երկնքի մասին խօսում է այնպէս, ինչպէս Երեն կարող էր խօսել իւր Տօր ատեն վրայ, որ ասում է՝ Ոչ ոք հանուած չէ այդ, եթէ ոչ Երեն, որ հաստատում է ինչ՝ երկինքն և երկիրը կանգնեն, բայց Նարա խօսքը չի անցնիլ: Վերջապէս ես ծանր եմ զգում Նարա աւազ, որ հրեական Յայտնութեան ոգեորում խօսում է և ներգործում է սրբութեամբ:

Բ.

Աբբայական ոգին, որով իսկ ապրեցնում է Յիսուս Քրիստոսը հրեական ճշմարտութիւններ բացատրելիս, ժամանակ առ ժամանակ մեզ ցոյց է տալիս իւր ներքին կեանքի մի նոր կողմ, որ ինչ նայեցէք այս տեսակէտով իւր հերքած աստուածութեան

վրայ։ Մեզ ասում են թէ՝ Յիսուս Գալիլիայի ոսկի որդին՝ ներքին մաքառման ու պքնումների միջոցով՝ աստիճանաբար ձեռք է բերել ներքին խաղաղութիւն և կրօնական ճշմարտութիւն, որոյ աւետարանիչն էր, վկայն ու նահատակը։ Մեզ ասում են, որ եթէ նայենք նորա վերայ այս տեսակէտից, առանց կանխակալ կարծիքի նորա գերբնականութեան մասին, այն ժամանակ աւելի լաւ կարելի է հասկանալ նորան և սիրել։

Այժմ եկէք հարցնենք նոյն իսկ Յիսուս Քրիստոսին, և նա կ'ասէ՝ թէ ի՞նչպիսի խորին ճշմարիտ ապաւորութիւն գործում է նա մեր հոգու վերայ։

Մենք բոլորեքեան համաձայն ենք այն կէտում՝ թէ նորա աւետարանած բարոյական օրէնքն՝ աշխարհում երբ և իցէ քարոզուած բարոյական օրէնքներից ամենաօգտակարն է և ամենատարբեր։ Նա դատում է ոչ միայն խօսքը կամ գործը, այլ և դատում է մինչև անգամ ղգայմունքը սորա ամենագաղտնի խորքերում։ Նորա դատաստանը մի անսպառ լոյս է, որ թափանցում է սրտի ամենախորին խորշերը։ Նա տեսնում է պատնութիւնը ոչ միայն գործի, այլ և չարախնդրութեան ու անձնասիրութեան մէջ, որ թոյլ է տալիս մեռնել նրան, որին կարող էր փրկել։ Նա տեսնում է շնութիւն յաչագուտ հայեացքի մէջ։ Նա հրամայում է պահել այնպիսի սրբութիւն ու արդարութիւն, որոյ գաղտնի վկայն միմիայն Աստուած կարող է լինել։ Նա պահանջում է՝ ոչ միայն չարին չ'խառնակել, այլ և բարին տնել, և այն էլ ոչ թէ միայն սորա արտաքին գործողութիւնն, այլ և ներքին էութեան սրբագործութիւնը։ Մի խօսքով՝ նա պահանջում է անպայման հնազանդութիւն երկու պատուէրներին՝ Սիրիր քո Աստուծոն քո գոյութեան բոլոր ղօրութիւններով, սիրիր քո ընկերին՝ ինչպէս քո անձը։ Նա պատուիրում է մարդկանց՝ «եղէք կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»։

Ես խնդրում եմ իմ ունկնդիրներից կատարեալ անկեղծութեան ջանքով դառնալ դէպի իրանց սիրտը։ Ուղիղ չէ՞ արդեօք, որ դուք ընդունում էք թէ՝ Քրիստոսի պատուիրած օրէնքը ամենաճշմարիտն է։ Ձեր խիղճը տեսնելով այդ օրէնքը բարձրանում է վերին քաջալերութեան ղգայմունքով։ Դուք հասկանում էք, որ երբ Աստուած

յայտնեց մարգոց սոյա կոչման օրէնքին, անպատճառ նա այդպէս խօսել էր։ Եթէ ես այս ամբիոնի բարձրութիւնից թեթեւացնէի այդ օրէնքը և ձեր դատաստանին նրան յանձնէի, եթէ ես ասէի ձեզ թէ՝ Աստուած կը բաւականանայ կիսատըբութեամբ և—միմիայն արտաքին ազնուութեամբ՝ համեմատ կենցաղավարական սովորական կարգին, այն սիրով և անձնազոհութեամբ, որով չարիը մեր անձնասիրութիւնն է որաշում։ եթէ ես ձեզ ասէի թէ՝ նրան կարելի է գոհացնել աշխարհային բարոյականով և արտաքին առաքինութիւններով, որոնք շրջող կեղծ գրամի գին ունին—անկասկած կը մոռանէիք թէ՝ այդպէս թեթեւացնելով բարոյականի պահանջները՝ քարոզիչը թեթեւ ժողովրդականութիւն կը վաստակի, սակայն դուք այդ բանը կընդունէիք ներքին արհամարհանքով և ամենահոտի մարդիկ անգամ համաձայնելով ձեզ հետ այս կէտում կասէին, թէ ես գերժրաւեմ իմ իրաւասութիւնը, իմ կոչման լիազօրութիւնը։

Ո՞ն սահմանումնքը։ Մեր հոգեի համար իսկապէս հարկաւոր է այնպիսի հոգեւոր և սուրբ օրէնք, որպիսին քարոզում է Քհաւտ Քրիստոս։ Բայց և այնպէս՝ մեզանից ո՞վ կատարեց այդ օրէնքը։ Ով կարող է նրան կատարել։ Ո՞վ այս ժողովում անմեղ է, չեմ ասում՝ գործերում, այլ և իւր սրտի խորհուրդների մէջ։ Եւ հէնց վերս առնենք մեր գործերը։ Ո՞վ կը ցանկայ, որ դրանք յայտնուէին վերջին դատաստանի օրը։ Ո՞վ երբեմն չէ սակայել, տեսնելով թէ՝ արքան ազգականութիւն, ներքինութիւն, չարութիւն, բարկութիւն և քծնութիւն բոլանդակել և ծածկել կարող է իւր մէջ մի սիրտ։ Ո՞հ, մենք փարիսեցիքս, որ բարձրագլուխ ձեռնում ենք մեր ընկերների առաջ և ընդունում ենք նոցա գովեստները, հարցրել ենք մի անգամ մենք մեզ թէ՝ ինչի՞ նման կը լինէինք, եթէ մեր գաղտնի կեանքը մի անգամ լոյս տեսնէր մեր ընկերների առաջ և եթէ նրանք մեզ դատէին այն կանոններով, որ մենք հանապազօր քարոզում ենք։ Ահա թէ ինչ բան վշտահար սրտով խոստովանում են այն մարդիկ, որոնք չեն կամենում ոչ գայթակղել իրանց անձով և ոչ էլ դժրել կատարելութեան օրէնքին։ Եւ այսպիսիք ամենալաւերն են, որոնք կը վկայեն այս ճշմարտութեան ոգին ժողովի մէջ։ Ա՛յն ինչ նանրասէր և յոռի կրքերին ծառայ դարձած հոգիները դուրս կը գան այսահերիւ սահ-

լոյ թէ՝ մենք ասելազանդութիւն ենք անում: չպահպանում ենք մարդկային բնութեան սրբոյ—բայց պատ ասացինը կը լինէին խղճի գաղտնի դատաստանի առաջ իրանց անձը պատասխանատու: Միշտ այսպէս է եղած: Նիթէ գուք կամենում էք գտնել համեմատութիւն սրբութեան պատասխանի ու մարդկային թշուառութեան միջև հարկաւոր է տարբերել ընտրեալ հոգիներին այն հայեացքն, որ կարողութիւն է տալիս նրանց տեսնելու բարոյական կատարելութեան մեծագոյն գաղափարները, բայց է անում նոցա առաջ և՝ անյաղթակի սրինն, որ բռնում է նրանց հրամանից: Հազարաւոր սրինաւորից մեր առնենք պօղոս առաքեալին՝ այդ սուրբ ու սիրալ հոգիներից առաջնաւորին: Ի՞նչպիսի խորին միտի աղաղակ է լսւում նորա բերանից, երբ նա պատմելի գերեզով մեր առաջ մարի օրէնքի ու մեղքի օրէնքի միջև պայքարն մեծաւորին նկարագրին անելիս ասում է՝ «ես թշուառ մարդ եմ: Ո՞վ կազատէ ինձ այս մահուանից»:

Այժմ դիտենք այն երևոյթին, որի առաջ մենք կանգնեցինք: Անհատական մեր համոզմունքն կանգնած է մի էակի, որ առանց ամենևին տատանելու, առանց տատգելու ու երկմտելու՝ քարոզում է մարդկանց կատարելութեան օրէնքն, որը նորա երևելուց յետոյ, այլ ևս մարդուս խիղճը չէ կարողանում հերքել: Այդ էակը քարոզելով այս օրէնքը բացարձակապէս գիտակցութիւն ունի թէ՝ կատարում է նրանը իւր քարոզածը: Նա, որ պիտի է տալիս մարդուն իւր թշուառութիւնից, և դարմանում է մինչև անգամ ամենատանջալից խիղճը, երբէք մեղքի գիտակցութիւն չէ ունեցել, երբէք նրա բերնից խղճահարութեան աղաղակ, ապաշաւութեան հառաչանք չէ դուրս եկել: Ոչ մի մինչև անգամ ամենաանհնազան ալիք չէ ծածանել նրա սուրբ խղճի մակերևոյթը: Նա համարում է իրան սուրբ, անարատ սուրբ և նորա աշակերտներին, որոնք վկայ էին նորա նեղբին կեանքին, անուանել են նորան սուրբ և արդար: Նորա պարզամտութեան պատմութիւններից, որ թողել են մեզ նորա և որանց պարզ պարզամիտ և անարուեստ ոճն ապացուցանում է, որ նորա իրանց գրութեան ժամանակ չեն հետևած ամենևին մի այս և է կանխակալ ծրագրի—նորա մեր առաջ պատկերացրել են մի այնպիսի կեանք,

սրի մէջ կրիտիկայի թափանցիկ հայեացքը չէ կարողացել գտնել չեմ ասում յանցանք, այլ ոչ մի սխալ, ոչ մի ակտաբիլիան և ոչ մի քծնի գիծ։ Այս անձի խոշոր գործունէութիւնները, ամէն մի պատմութիւնը և բոլոր մարդերն անընդհատ մասնակցում են եղած սիրոյ ու արուեստի գաղափարական օրէնքի։ Այդ կանչն ոչ միայն հասուսում է իւր կատարելութիւնն, այլ և իւր երևելիչ յատկ համարում է իրան խղճի անպայման իշխան։ Նա կանգնում է և արձակում յետ է դարձնում մեղաւորներին՝ արդարացրած իւր ինքնակալ գտասակով։ Նա արդարացնում է կամ դատապարտում է։ Ամէն հոգիք մի օր նպատ գատաստանի առաջ սիրոյ ներկայանան, և բուսական է նպատ մի խօսքն «Ես չեմ ճանաչում», որ լսողները ընդ միշտ պրկուին յաւիտենական երանութեան իդ։

Ուրիշ չէ՞ արդեօք, որ Նա է ճշմարիտ Քրիստոսը և այն ոչ միայն Պօղոսի ու Յովհաննու Քրիստոսը, այլ և առաջին երեք աւետարանչներու,—ա մենահաւատաւոր և բոլորովին անկիճելի հաւատոյքներով Քրիստոսը։ Ինչ՞ նման է այս անձնուրացութեան առաջ ժխտող կրքիսիկալի ենթագրած երիտասարդ Գալիլիացին, որ իբր թէ ներքին աքնութեան միջոցաւ հաստատում է ներքին բազաշութեան, և ապաւաճառին պատեգրութեան աղօթքով և պատմութիւն։

Եթէ Նա մարգ էր, թող ինձ ասեն թէ՝ ի՞նչպէս Նա սիրել էր բարոյական աշխարհին։ Թող ինձ յայտ ասեն հեղքն այն ներքին մեքանութեան, որ անպատճառ պիտակելու էր նրա մէջ կատարեալ արդարութեան վշտաբեր յղութեան։ Թող ինձ մեկնեն գաստարի ու Իշխանի այս դիքն, որ բոլոր մարդկանց մասին ասելիս է գերագոյն վճիռ, որի կատարումը լինելու է յաւիտենականութեան մէջ։ Տասն և ինն գոլ է, եղբայրք, որ քրիստոնէական խիղճը վճռել է այս խնդիրն և Նա երբէք չի փոխիլ իւր վճիռը։ Այդ խիղճը ղգացել է, որ Նա ունի այնպիսի արդարութիւն ու հեղինակութիւն, որ կարող չէ երկրի ծնունդ լինել, այդ պատճառով նա ողջունել է յանձին Քրիստոսի իւր մարգապետին և թագաւորին։

Գ.

Երկրորդ՝ Քրիստոսի աստվածական կոչումն, որ ապշեցրեց մեզ նորա կրոնական ճշմարտամիտն յայտնելու և խիզճ դառնալու եղանակի մէջ, առաւել ևս զօրաւոր կերպիւ յայտնուում է, երբ նայում եմ այն տեղի վերայ, որ Իւր համար պահանջում է նոյա սիրոյ և կեանքի մէջ, որոնք պիտանի են նորա մօտ։

Պէտք է լիովին նշանակութիւն տալ այդ խոստովանեան։ Անկասկած բոլորովին բնական է՝ որ նա, որ պատուիրում է մարդոյ «սիրեցէք զմիմեանս», պիտի կամենար, որ ինքն էլ սիրուէր։ Սակայն հարկաւոր է աւելի զգոյշ լինել։ Մենք Յիսուս Քրիստոսի գաղտնի մէջ երկու բան ենք տեսնում։ սիրել մարդուն և սիրել այն, որ կրօնական լեզուով կոչուում է մարմնոյ ընկերացումն։

Ի՞նչպէս համաձայնեցնենք—այս երկու իրողութիւնքը։ Այ, եղբայրք, գրանց միջև հակասութիւնը առ երևոյթս է։ Քրիստոնէութիւնը կամենում էր մի կարգ հաստատել զգացմունքների մէջ։ Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ սրտի աշխարհում նա կամենում էր հաստատել օրէնքի թագաւորութիւնը։ Նա այդ կարգի մէջ որոշեց այն տեղն, որ Աստուածուն կը պատկանի և այն տեղն, որ մարդուն է յատուկ։ Այ, սէրը պիտի շաղկապէ բոլոր էակներին միմեանց հետ, սակայն այդ պիտի լինի նրանոյ Աստուծու հետ կապելով։ Աստուած՝—ահա այն միակ էակն, որ կարող է իշխել մեր սիրոյն այս կաստարեալ լրութեան մէջ։ Մենք պարտաւոր ենք միւս բոլոր էակներին բաժին հանել այդ սիրոյ մի մասը, և եթէ մի մարդ իւր բոլոր սէրը մի այլ էակի նուիրէր՝ դա կը լինէր խանգարումնք ու կառապաշտութիւն։ Այդ պատճառով սրբան աւելի սուրբ է մի էակ, սրքան աւելի բարձր կանգնած է սրաբանների բարոյական կարգի մէջ, այնքան էլ նա աւելի երկիւղ է կրում որ մի գուցէ նրանոյ անսպիսի վատաստութիւն տայ, որ վայել է միմիայն Աստուծոյ։ Նա խոնարհում է և յետ է քաշուում ասելով՝ «Ո՛չ ինձ, ոչ ինձ, Տէր, այլ քո անուան վայել է փառք»։ Այս կերպով իրագործուում է էակների այն բարոյական կարգը, որ կանխատեսել էր Պիւթագորաս, երբ ասում էր՝ թէ ներդաշնա-

կամքիևը տիեզերքի օրէնքն է։ Բանականաբեան օրէնքի այս տեսակէտին նայելով՝ Յիսուս Քրիստոսը աշխարհին պարգևեց մարդկայնաբեան օրէնքը։

Սակայն սրտաճնների այս բարոյական կարգի մէջ Յիսուս Քրիստոս ի՞նչ է պահանջում իւր համար։ Ի՞նչ բանի իրաւասնդիր է մարդկանց մէջ։ Ես հարցնում եմ Աւետարանիչներին և սրա ինձ պատասխանում են, թէ Յիսուս Քրիստոս պահանջում է, որ մենք ընդունենք նրան, որպէս գերագոյն առարկայ բոլորապատուի սիրոյ և ամենայարին տրքիւր կեանքի։ Նա իւր հրապարակական քարոզութեանց առաջին խօսքերից յայտարարում է թէ՝ նորա աշակերտները պիտի հալածանք կրեն նորան սիրելու. պատճառով։ Նա քայ է անում իւր գործի և իւր անձի մեծաւթիւնը՝ գործադրելով իւր դատախազական իրաւասու եղանակն, որի նպատակն ոչ թէ ճշմարտաւթիւններ ձևաբանելն է, այլ պտի մէջ զգացմունք և լիքնողութիւն տրծարծելը։ Այդ ճանապարհով նա առաքեանորար աշակերտներին պատրաստում է ճանապելու՝ թէ ով է Ինքը։ Միմիայն տարի ու կէս վարդապետական գործունէութիւնից յետոյ նա վճռաբար հարց է տալիս նրանց թէ՝ «Ի՞նչ էք կարծում ոմ եմ ես», և երբ լսում է Պետրոսի դատանութիւնը իւր Աստուածութեան մասին, յայտնում է, թէ իւր եկեղեցին պիտի հաստատուի այդ խոստովանութեան վերայ։ Նա Ինքն ուղղութիւն տալիս է իւր աշակերտների հայեացքին, ուշադրութեան ու հաւատին։ Նորա մօտ պիտի գան, նրան հաւատան. և նրան սիրեն։ Բոլոր զգացմունքները պիտի ենթարկուին այս իշխող զգացման, մտքմնի և սրեան բոլոր կապերը պիտի խզուին, և որպէս պի այս ճշմարտութիւնը ներմուծէ իւր աշակերտների սրտի մէջ կենդանի զօրութեամբ՝ նա միևնոյն ժամանակ չէ կատում այն սպառնալիր չափազանցութեան առաջ, որ լսում է նրա անատա խօսքերի մէջ. «Ով չէ կարող տանել իւր հօր և մօր, ով չէ կարող ուրանալ իւր սեփական անձը՝ նա կարող չէ իմ աշակերտ լինել»։

Լաւ միտք ասէք, որ ես միմիայն առաջ եմ բերում առաքեին երեք աւետարանիչների վկայութիւնը։ Հապա ի՞նչ կը լինէր, եթէ ես վկայ բերէի Յովհաննէսին, որ միւսներից աւելի խորատուզուել էր Իւր Ո-

սուրբի հոգու մէջ։ Ի՞նչ կը լինէր, եթէ ես ժամանակ ունենայի գոյց տալ ձեզ Պօղոս առաքեալին, որ Քրիստոսին նուիրել էր իւր որթի բոլոր հատատը, բոլոր բերկրութիւնը և բոլոր զգայմունքները։

Բայց Քրիստոս սէր առեւտրանելով՝ յայտնում է նրան՝ որպէս կեանքի աղբիւր։ Եւ արդարև՝ նորա անձնատրութիւնից միայն ժամանակ հասում է կեանքի ու սրբութեան մի անսպառ աղբիւր։ Միայն արէք թէ ի՞նչ իմաստ պարունակուում է այն պարզ սուրբ խօսքերի մէջ, որով դառնում է նա երկրիս ամեն վաստակեալներին թէ՝ «եկայք առ իս», և այն խոստման մէջ, որ տրւում է, այնքան էլ գերմարդկային՝ թէ «Դուք կը գտնէք հոգու խաղաղութիւն»։ Հէնց այս մտքով է, որ նա կոչում է խորհրդաւոր ընծրւիքի սուրբ սեղանը, հրաւիրելով ապագայ ժամանակի բոլոր հատատացեալներին՝ ճաշակել նորա քեհեալ մսրմինն և խմել անապական արիւնը, որ հեղուում է աշխարհի մեղքերի քաւութեան համար և այդ պատարագը նրանց համար հատատոյ մշանջենական առտրիայ է դարձնում։ Վերջապէս նա այս խմաստով թողնելով իւր աշակերտներին՝ այն մեծ րոպէին, երբ ատատելով իւր գործը, եթէ նա միայն մեծ մարգարէ էր, պէտք է յետ քաշուէր և նոցա հայեացքը դէպի Աստուած դարձնէր—նա դառնում է դէպի նրանց ասելով այն խօսքերն, որոնք դարերի ընթացքում միխիթարում են հատատացեալներին. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»։

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)։

ԿՆՈՋ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ։ Պատկի լուծումն մեր ժամանակ աւելի և աւելի յաճախ կրկնուում է, որա հետ միասին քարոզուում է նոր վարդապետութիւն կնոջ ազատութեան մասին, որ անշուշտ բովանդակում է իւր մէջ և այր մարդու ազատութեան խընդիրը։ Այս նոր վարդապետութիւնը մատամբ երևան է գալիս «պլաք

«ԼԲԿ» ասղօրինի վարդապետութեան ձևսվ, որով ներկայ ամենանութիւնը հնագոյն հաստատուածիւն է համարուում և որ կամենում է ամենանութիւնը հիմնել միայն որսի ազատ ձգտման վերայ, իսկ մեսամբ նոր վարդապետութիւնը ձգտում է բարձրացնելու հինգ դիրքին, ազատել նրան նախկին հպատակութիւնից և բոլորովին հաստատել նրան այդ մարդու հետ։ Առաջին սեռակի վարդապետութիւնն, որ պահանջում է հինգ ազատութիւնը յանուն «ԼԲԿ», կը կոչենք ազատութեան «ՓԼԷՂՅԿՓՓԱԿԱՆ ՈՐԴՈՒՆԻ», իսկ երկրորդ սեռակի վարդապետութիւնն, որ պահանջում է նոյնը յանուն «ՏԱՐԲԵՐԱՅԻՆ ԼՐԱՆԻ» կը կոչենք «քաղաքական-հասարակական ուղղութիւն» անունով։ Նորա երկուսն էլ մերժում են քրիստոնէական հայեացքը հինգ և ամենանութեան վերայ։ Անհատական քրիստոնէութիւնն ազատեց հինգ և հաստատեց նրան այդ մարդու հետ, որովհետև նա նայում է հինգ վերայ իբրև ըստ պատկերի Աստուծոյ ստեղծած արարածի վերայ, մանաւանդ է անում նրան յատկանական կենայ շնորհայ, այդ մարդուն հաստատ մանաւանդութիւն է տալիս նրան Աստուծոյ խօսքի մէջ, միութեան և հաղորդութեան մէջ և այլն։ Բայց հաստատութեան այս յարաբերութեան հետ, որ միացնում է այդ և կին մարդոյ անկեղծ մտերիմ կենակցութեամբ, քրիստոնէութիւնը հաստատում է հինգ հնազանդութիւնը մարդուն—հնազանդութիւն, որոյ հիմն դրած էր դեռ մարդու ստեղծագործութեան ժամանակ։ Որովհետև այրը հինգ գլուխն է, ինչպէս Քրիստոս Գլուխ է և փրկիչ եկեղեցւոյ։ Եւ ինչպէս եկեղեցին հնազանդ է Քրիստոսին, այնպէս և կանայք սէրտք է հնազանդ լինին իրանց մարդոյ ամեն բանում (Եփես. ե. 24, Ա.ե. Պետր. գ. 1)։

Ընդդէմ այս պարտականութեանց և հնազանդութեան նոր վարդապետութիւնը պինատրուում է ամեն կերպով և նոյա կատարեալ ջնջումից նա առաջ է բերում ամբողջ շարք շատ նշանաւոր հետևանքների։

Ազատութեան գեղեցկագիտական ուղղութեան կատակիչները գոլաբանում են ազատ սէրն իբրև հակասական ամենանութեան գերութեան և ընդ. նմին գոլաբանում են հանճարել, ամեն նախապաշարումներից բարձր կանգնող հինգ, որ ապրում է ազատ սիրոյ

շրջանում գեղեցկագիտական զուտ ըմբռնումների մէջ, մանաւանդ գեղարուեստի պատճառած վայելչութեանց մէջ և մինչև իսկ ինքը պարապում է գեղարուեստական ստեղծագործութեամբ։ Այս ձգտումն և ուղղութիւնն երևեցաւ նախ վիպասանական դպրոցում Գերմանիայի մէջ և արտայայտուեցաւ Ֆր. Շլեգելի յայտնի «Լիւցինդա» վէպի մէջ, յետոյ նա երևան եկաւ զանազան ձևերով թէ Գերմանիայում և թէ Ֆրանսիայում (Ժօրժ Զանդ)։ Այսպէս ուր տիրապետող է ազատութեան քաղաքական-հասարակական ուղղութիւնը, քարոզուում են ընդհանուր մարդկային իրաւունքներն, պոնք խլած են հինջից, ինչպէս պնդում են ազատութեան կուսակիցները։ Այս ուղղութեան, որ շատ փոխակերպութիւնք ունի, պատկանում է գործիչ Ջան Սաիւարտ Միլլի շարադրութիւնը հինջ հնազանդութեան վերայ։ Այս ուղղութեան հետևողները հետևեալն են քարոզում։ տանտիկնութեան և մայրութեան կոչումն հինջ համար շատ սահմանափակ է, ի բնէ նա կոչուած է նոյն հասարակական գործունէութեան համար ինչպէս և տղամարդը, բայց տէրի վրեժ տեսը (պատկանը) անյիշատակ ժամանակներից ի վեր գաղտնի համակայնութեամբ տէրի թոյլ տեսը պահել է հնազանդութեան մէջ և խոչընդոտ էր լինում հինջ զարգացման և իւր ընդունակութիւնքը գործադրելուն, որոնց վերաբերմամբ նա բոլորովին հաւասար է այլ մարդուն։ Սորա վերայ աւելացնում են հետևեալը՝ քրիստոնէութիւնն այս վերաբերութեամբ չը կարողացաւ ազատել արևելեան նախապաշարմունքից։ Այսպէս յանուն «մարդկային իրաւունքի» պահանջում են նոր օրէնքներ, պոնք հինջ իրաւունքներն ապահովին—ոչ միայն օրէնքներ կայից և. ժառանգութեան մասին, ոչ միայն կանոններ արձակման մասին, այն է որ տէրի հեշտապնեն ամուսնութեան կապի խզումն—ոչ միայն օրէնքներ, որոնք թոյլատրէին ժամանակաւոր ամուսնութիւն, ընդ նմին իւրաքանչիւրի բարի դիտողութեան թողնելով ժամանակի սրաշումն, այլ պահանջում են օրէնքներ, որոնք հինջ հաստատէին այր մարդու հետ ամեն վերաբերութեամբ։

Սխալ յեղափոխական գաղափարները հաւասարութեան մասին, որոնք վաղուց հրիւ ստացել են պետական կեանքում այժմ կամե-

հաւմեն թափանցել և ընտանեկան կեանքի մէջ և խզել այն կապն, որ բոլոր մարդկային հասարակութեան արմատն է: Աղատութեան երկու ուղղութիւնք էլ հեշտութեամբ փոխանակւում են միմեանց և երկուն էլ կարող են մի կնոջ անձնատրութեան մէջ բոլանդակուիլ: Բայց վերևը յիշուած գեղեցկագիտական ուղղութիւնը կամ այն ուղղութիւնն, որոյ խնդիրը զանազան գոյներով սէրն է, աւելի մօտիկ է կնոջ բնութեան և աւելի հեշտութեամբ կարող է իրագործուել իրական կեանքում: Ընդհակառակն քաղաքական ազատութեան ուղղութիւնն է աւելի այնպիսի տեսութիւն, որ թէև կարող է յոյժ զարգացած յաչագիտութեան և ընդարձակ գրականութեան աւարկայ դառնալ և շատ ընդունակ է տարածելու գաղափարների մեծ խառնակութիւն, բայց երբէք չէ կարող իրագործուել և իրանք կանայք էլ այնպէս լրջութեամբ չեն վերաբերում դէպի նա, ինչպէս դէպի սէրը: Նա շատ շատ կարող է որոշեալ փոփոխութեանց առիթ տալ և կարող է մի տեսակ յարմարութիւններ անել կեանքի ամուսնական կազմակերպութեան վերայ: Այս երևեցաւ յեղափոխութեանց ժամանակ, երբ որ 1848 թուականին կանայք մեծ բազմութեամբ Հանդէս եկան քաղաքական խնդիրներով ու ցոյցերով, կազմում էին քաղաքական ժողովներ և մինչև անգամ հիմնեցին քաղաքական ժողովարան (կլուբ), որ շուտով փակուեցաւ: Այն կանայք, որոնք երևում էին պանդոկներում և ընծեռնարաններում ազամարդու շորերով և սիգարը բերաններում, պատկանում էին աւելի ազատութեան քաղաքական քան գեղեցկագիտական ուղղութեան:

Կարող են մեզ հարցնել, թէ արդեօք մենք ճանաչում և խոստովանում ենք այս ազատասիրական ձգտմանց մէջ որ և է չափով արդարութիւն: Անշուշտ մենք ընդունում և ճանաչում ենք, որ ինչքան նոցա պատերազմն յարուցած է ներկայ ամուսնական իրաւանց դէմ, այնքան նա ուսանում է արդարութեան և օրինաւորութեան կերպարանք, ի պատճառս բազմութիւն դժբաղդ ամուսնութեանց, որոնց մէջ կանայք ենթարկուում են ամօթալի բռնութեան, իրանց ամուսինների կողմից: Այսպիսի վիճակ նկարագրած է շատ վէպերում, որոնց մէջ յայտնած են գանգատ կնոջ վիճակի մասին և պա-

հանդէս, որ նոյն ազատասէր այդպիսի անարժան ստրկութիւնից և մենք բնաւ չենք ժխտում որ այդ նկարագրութիւնք յաճախ համապատասխանում են սիրաբ իրականութեան։ Բայց բոլորովին սխալ է կարծիքը, թէ գործին օգնել կարելի է մարմնոյ անզգայութեամբ կամ յեղափոխութեան միջոցով և յեղափոխական օրէնքների զօրութեամբ։ Ամենօրինները կարող են միմեանց հաղար տեսակ դրկանք ու տանջանք պատճառել, սրոյ այդքանը դնել չէ կարող ոչ մի քաղաքական օրէնք։ Ոչ ոքոտել օգնել կարող է միայն քրիստոնէութիւնը, բայց վերոյիշեալ վէպերի հեղինակները, մանաւանդ այդ տեսակի կին հեղինակները շատ հեռու են մատծելուց և հասկանալուց, որ բոլոր նկարագրած թշուառութիւնք առաջանում են հէնց նրանից, որ կեանքն ընկճանում է արտաքոյ քրիստոնէութեան։ Ընդհակառակն նոքա մերժում են և ծաղրում են այն միակ փրկարար գեղն, որ կարող է բուժել կամ գոնէ թեթևացնել հիւանդութիւնը։ Նոյնը կարելի է ասել և քաղաքական-հասարակական ազատութեան առաջնորդների մասին։ Նոքա նախապէս քրիստոնէութիւնը մերժում են։ Եւ թէև մինչև անգամ նոքա հաւատացնեն, որ իրանք չեն ջնջում տմնամութիւնն, այլ միայն բարեփոխում և ապնաւացնում են նրան, բայց և այնպէս նոքա իրաւապէս պղծացնում են ամնամնութիւնը։ Զերբազատած կնոջ հետ, որ չէ կամենում հնազանդել իւր ամնամնուն և չէ կամենում հասկանալ, որ նա կարող է կատարել ստունը միայն և եթէ իբրև իւր մարդու հաւատարիմ օգնականն և որ իւրաքանչիւր անհամձայնութեան պէպքում առաջարկում է մեկնումն միմեանցից—այսպիսի կնոջ հետ չէ կարելի ապրել միասին խաղաղութեամբ և համձայնութեամբ։ Եւ երբ ամնամնութեան անքակտելիութեան վարդապետութեան հակառակ պահանջում է, իբրև գլխաւոր պայման, որքան հնար է հեշտ և յարմարագոյն լուծում պսակի, այդպիսի պէպքում ամնամնութիւնը գադարում է բարոյական հաստատութիւն լինելուց։

Ինչ վերաբերում է այն հիմունքն, որոյ վերոյ ասիրաբար կանդնում է կնոջ կարծեցեալ իրաւունքը կատարեալ հաւասարութեան մասին ազամարդու հետ, նոքա՝ այդ հիմունքներն առաջ են գալիս կնոջ բնութեան, նշանակութեան և ընդունակութեանց վերոյ ու-

նեցած այնպիսի հայեցակէտից, որ բոլորովին հակառակ է իրականութեան: Բոլորովին անկախաբար ձգտումն է կնոջ ընտանեկան և անպիսին կեանքից հանելով նրան հասարակութեան կեանքի մէջ մտցնելուն, սա նա անշուշտ այնքան աւելի կը մեղանչէ իւր նշանակութեան դէմ, որքան եռանդով անձնասուր կը լինի այդ հասարակական կեանքին, թէև միայն երևակայութեամբ: Կինն այնպիսի ընդունակութիւնք և շնորհք ունի, որոնք առաջ չեն ոտքամարդուն և որոց վերաբերմամբ այդ մարդը չէ կարող հաւասարուիլ նրան: Բայց նորա ընդունակութիւնք հոգեկան—պաշտպանական են, ուրեմն այ զուտ հոգեկան և չէնոյ այս սրտի տարրի մէջ է այն, որոյ ղօրութեամբ կինն ընդունակ է լինելու մարդուն օգնական և միխիթարիչ անտեսուհի, քոյր, բոյլ ընկերուհի և այս ձևով անձամբ ներկայացնելու ընդհանուր մարդկային և քրիստոնէական սկզբունք—այդ սրտի տարրի մէջ է կայանում այն առաքելութիւնն, այն առանձին փառքն, որ շնորհած է կին մարդուն: Բայց հասարակական կեանքի համար նորա ընդունակութիւնքն և շնորհքն անպէտք են: Կանոնաւորութիւնն է ամենաբաժանութեան նուրբ պաշտմունքն, ոգեշունչ յանձնառութիւնը վերաբերմամբ նորա շուրջն եղածների, երկրաւորութիւնն անցնելու բնութեան որոշած սահմանից: Կանոնաւորութեան նշանակին է քօղը: Կանոցի բնութեան յատուկ է խորին ընդունակութիւն ամեն վեհի համար, բայց նա չդարպասական հանգիստ չէ բերում ըմբռնածն ու սեպհականածը, այլ պահում է իւր սրտում և տոլորդում է այն նեղ շրջանին, որոյ մէջ նա հաստատուել է և ոտքատանելան գտել:

Այսպէս խօսելով մենք չենք կամենում կնոջ չեռացնել ազատ նական և գեղարուեստական լուսաւորութիւնից: Ես մենք բնաւ չենք ուզում այդ գեղարուեստական վերաբերմութեամբ կան կատեգոյի հանճարներ, որոնք կարող են հասարակութեան տալ նշանաւոր երկասիրութիւնք: Ա՛ւ հասարակ անհնարին է կնոջ և այդ մարդու բնաւորութեանց մէջ ճիշդ որոշ սահմանագիծ քաշել այնպէս որ մի աեուր չանցնեսը այն, ինչ որ ունի միւսը և այս վերաբերելի է ամեն կենդանի արարածներին: Բայց պնդում ենք, որ կնոջ այդպիսի գեղարուեստական և գրական գործունէութիւնը պէտք է

երևի Հոռոմականութեան առաջ միայն իբրև բացառութիւն, այն ինչ ներկայ գրականութիւնը չափազանց Հարուստ է կանացի գրական երկերով։ Պնդում ենք նայնպէս, որ կնոջ գեղարուեստական և գրական գործունէութիւնը պէտք է ենթարկուի նորա գլխաւոր կոչմանն, որ նրան մնայնայցոյց է լինում անցային կեանքի և գերդաստանի վերայ։ Ի վերջոյ մենք Համոզված ենք, որ ոչ մի կանացի տաղանդի չէ տուած կարողութիւն գեղարուեստի և գիտութեան մէջ իսկ—ստեղծագործական և կատարելապէս տանձին գործունէութիւն ղարգացնելու, ստեղծելու այնպիսի մի գործ, որ գեղարուեստի և գիտութեան պատմութեան մէջ անեներ յիրաւի իրական կշիռ, յաւաջադիմութեան Համար նշանակութիւն ունեներ, այնպէս որ գեղարուեստի և թէ գիտութեան պատմութիւնը կը մնայինն նայնն, եթէ կանացի արուեստասիրական երկասիրութիւնը աշխարհ չը գայինն էլ։ Ազատութեան պաշտպաններըս, զորօրինակ Ջոն Ստուարթ Միլլին, այն կարծքի են, թէ կանացի գեղարուեստական և գրական օրինակելի երկասիրութիւնք իսկոյն Հանդէս կը գան, երբ կանայք կազատուին այն մնպրտուռ բռնութիւնից, որ թուլացրել է նոցա ընդունակութիւնն և խոչընդոտ եղել նոցա զարգացման։ Կարծում ենք, որ այն ժամանակ կանանց միջից Հանդէս կը գան Համերատ, ոտա Աբիստոտել, Բեռհավէն։ Մենք կանգ չենք առնիլ այս կարծքի վերայ, որ հիմք չունի, այլ կը հետևենք միայն «Անբաժանական Մեթոդի» վարձին։ Արհեստն, պայ մէջ կնոջ տաղանդը կարող է Հասնել իսկական ինքնուրոյնութեան, բեմական արհեստն է և այս հէնց այն պատճառով, որ նա իսկապէս նմանողական արհեստ է, վոխ ոտաճ բանաստեղծական ստեղծագործութիւն է։ Բայց և այս արհեստի մէջ կնոջ Համար կայ մի տեսակ վտանգ։

Ներկայումն ժամանակակից ոգւոյն պահանջներին բաւարարութիւն տալու Համար վորձ վորձուեցաւ թոյլատրել կանանց լինելու ուսանող կատարեալ ակադեմիական իրաւունքներով, նայնպէս իրաւունք տուեցաւ պետական քննութեան, որ պէտք է բանար նրանց ճանապարհ պետական պաշտօնների Համար, եկեղեցական պաշտօնների վերաբերմամբ կայ ոտանձին դժուարութիւն, որովհետև Ս. Գրայ մէջ պարզապէս ոտած է, որ կինը պէտք է լուէ եկեղեցում

(Կորնթ. ԺԲ. 34)։ Ա.յսպիսի վարձերի մէջ մենք կարող ենք տեսնել միայն ագեղութիւն և իրերի բնական կարգի տապալումն՝ որ պէտք է ինքն իրան ոչընչանայ իւր ոչնչութեամբ։ Միակ գիտութեան կաճառն, ուր կինը կարող է տեղ ունենալ, կործես, բժշկութեան գիտութիւնն է։ Ա.մենևին դատապարտելի չէ, որ կանայք իրանց նուիրուած են բժշկական արհեստի մի քանի ճիւղերի ուսումնասիրութեան, որպէս զի կարողանան բժշկական օգնութիւն հասցնել իգական սեռի անճնաւորութեանց։ Բայց մենք տեսնում ենք, որ դէպք լինի է և արգարութիւն է նրանց ի շարս այլ-բժիշկների դասել հաւասար իրաւունքով և արդեօք նոքա չը պիտի պատասխանատուին գործադրելու իրանց արհեստը միայն որոշեալ տհմանիներում և այն այլ բժիշկների հսկողութեան ներքոյ, որոնք աւելի ազատ ուսումնական շրջահայեցողութիւն ունին։ Ազատութեան պաշտպանները պահանջում են էլի, որ թոյլատրուի և գաղտնի պաշտօններ վարելու, զօրութիւնակ որ նոքա կարողանան փաստաբաններ լինեն և դատաւորներ, նոյնպէս ունենան իրաւունք ոչ միայն պետական ժողովի անդամներ ընտրելու, այլ և ինքեանք ընտրուին անդամ պետական կամ պատգամաւորաց ժողովի։ Այս դէպքում կնոջ ազատութեան կուսակիցներն ներկայացնում են իրանց այնպիսի կանոյի բնութիւն, որ բոլորովին տարբեր է իրականից և աւանդ ուշադրութեան են թողնում կնոջ ոչ-իրաւաբանական բնութիւնն, որ հակառիթ է աւելի զգացմունքի ենթարկուելու, քան տարփայական հիմունքներին և անդորր խորհրդածութեանն յարմարուելու։ Չեն բացատրել նոքա և այն հանգամանքը թէ ինչպէս կընթանան գործերն, երբ այդ կանայք—փաստաբանները, դատաւորները, պատգամաւորաց ժողովի անդամները տպատելիս կը լինին իրանց յղիութեան լուծման և կամ երբ ծննդից յետ պառկած են անկողնում։ Բայց իրապէս հօ չէ կարելի ծածկել, որ այս բնական իրողութիւնք գոյութիւն ունին և չէ կարելի նրանց թեթևացութեամբ վերաբերուիլ, կամ նայել նոցա վերայ իբրև չնչին իրողութեանց վերայ։ Այս դէպքերը կան իրական կեանքի մէջ, որ պարզապէս ցոյց է տալիս, որ կնոջ շրջանն ոչ թէ հասարակական, այլ բնականեկան կեանքն է։ Պետութիւնը չը պէտք է հակասութեան մէջ

լինի իւր ռեալական հիմնական հատատաութեան դեմ, այլ ընդհակառակն պէտք է պահպանէ և պաշտպանէ այդ հատատաութիւնն, որին ի միջի այլոց վերաբերում է և այն պահանջն, որ կինը ծնանի զաւակներ և դաստիարակէ նրանց հայրենեաց համար: Չէնց այս պատճառով պետութիւնը չէ կարող թոյլ տալ, որ կանոնք հրաւիրուին այնպիսի պարտաւորութեան, որոնցով խախտուում է զերդաստանի կեանքը—ամբողջ հատարակութեան այս նշանաւոր հիմն:

Կնոջ քաղաքացիական ընդունակութիւնն ապացուցանելու համար մանաւանդ էին լինում պետութեանց յայտնի կատարիչ կանանց վերայ, որոնք արքունական գահի վերայ բազմած մեծ պետական ատաղանաներ են արտայայտած և այսուհետև արին այն եզրակացութիւնը, թէ յանկարծ կը լինէր անհնար կին նախարարներ, մանաւանդ խորհրդարանի նախագահներ (Jean Sarrasin M[illegible]): Անվիճելի է, որ եղել են թագաւորական գահի վերայ քաղաքական հանճարով օժտուած կանայք, զորօրինակ Անգլիայում Ռուսաստանում, Աւստրիայում: Կարելի է համձայնիլ, որ անգլիական եղիսաբեթ թագուհին այնպիսի նշանաւոր քաղաքական միտք և կամք ունէր, որ թոյլ չէր տալիս, որ իւր կանացի թուլութիւնք ազդեցութիւն ունենային պետական գործերի վերայ և նորա մանաւանդ սիրահարական հանգամանքներն երբէք չէին կարողանում նրան մոռանալ տալ պետութեան կատարելի իւր դիրքը: Բայց այդպիսի աւանձնապէս օժտուած անձնաւորութեանց վերայ պէտք է նայել իբրև իգական սեռի բացառութեանց վերայ, որոնք ի շնորհս յայտնի lusus naturae-ի (բնութեան խաղի), նորա ստացած են այր մարդու բնութիւն: Նշանակելագէր բանաստեղծն իւր Մարգարիտա թագուհու բերանը դնում է հետևեալ խօսքերը.

Ա՛յո՛, ես «կին» եմ: Եւ այս խօսքը նշանակում է՝ անուշիկ, հարս, դստեր կամ քոյր, որ յենուած է ամուսնոյս վերայ, ինչպէս թոյլ բազեղը յենուում է կաղնու վերայ, որի վերայ նա փաթաթուում է: Բայց կատարիչ կինն, որին հպատակում է ամբողջ ազգը, ինքն է կաղնի: «Լսո՞ւմ ես եղբայր»:

Արքէն այս համեմատութիւնը կնոջ կապած հետ ապացուցանում

է, որ այսօրով իսկապես Հանգստանում է բայսաբանական սեռից, թեև մենք չենք պնդում, որ կինջին անշուշտ պիտք է ներկայացնել բաժերի ձևով։ Բայց վերոյիշեալ Հանճարեղ կառավարիչ կանանց մէջ նկատման արժանի է առանձին ընտրողական կարողութիւնն, որով նոքա երբէք կին նախարարներ կամ խորհրդարանի նախագահներ նշանակած չեն, այլ միշտ կոչած են այդ պաշտօնների համար այր մարդիկ, որոնց իրաւարքները լաւ էին։ Բայց բայսաբանութեանց վերայ կանոն հիմնել չէ կարելի և առհասարակ շատ անկանոն համարելի է այն Հանգամանքն, որ կինն ընդունում է իւր վերայ այնպիսի կոչումն, որ իրապէս պատկանում է այր մարդուն, ինչպէս զորօրինակ թագաւորի կոչումն։ Բոլորովին արդար նկատողութիւն անում է այս մասին Ռիչն. այն է, նա ասում է. կինջ ժառանգութիւնը բացատրում է միջին դարերի սովորութիւնից, երբ ամբողջ մի երկիր Համարում էր թագաւորական ընտանիքի մանուածոյ սեպհականութիւն. ուստի և ուր չը կար ժառանգ արական սեռից, այնտեղ կառավարութիւնն իւր վերայ պէտք է առնէր կինջ. բայց որքան որ ասելի բացատրում է պետութեան և գերդաստանի գաղափարն, այնքան Հաւանական է, որ շատով չնչուի իգական թագաժանգութեան իրաւունքը։

Եթէ անսահման ազատութեան կառավիչները իրանց մնչեւանպաթեամբ յօգուտ Հաւատարութեան մերժում են այր մարդու և կնոջ անհատատարութիւնը Հոգևոր վերաբերութեամբ, նոյնը նոքա անում են և ֆիզիքական (մարմնաւոր) վերաբերութեամբ։ Մի Հայեացքը միայն կնոջ մարմնաւոր կազմուածքի վերայ անտարակոյս ցոյց է տալիս և ոչ միայն այն, որ նա նշանակած չէ այնպիսի աշխատանքի Համար, որ պահանջում է ուղղակորդու ֆիզիքական այժ, այլ և այն, որ նա՝ կինը կոչուած չէ նոյն մտաւոր աշխատանքի և ճգանց Համար էլ, որոց Համար նշանակած է այր մարդը։ Ազգէն գաղափարակութեան և գաղափարութեան ժամանակ գոլորշում այս Հայեացքն ոչքի առաջ ունենալու է և ուր սորա վերայ ուշք չէ դարձնում այնտեղ անպատճառ երևում են սխալ գաղափարակութեան վատ հետևանքները։ Ազգութեան և անպայման Հաւատա-

րութեան տեսակետով անտարակոյս պահանջելի է, որ աղջկունք էլ այնպէս կրթուին, ինչպէս տղայք, որ նրանց աւանդուին ոչ միայն միևնոյն առարկայք, այլ և որ դպրոցական կարգերի ու վարժութեանց վերաբերմամբ աղջկունք էլ կատարեն միևնոյն պահանջները: Այս փորձը կատարուեցաւ մի քանի տեղերում Հիւսիսային Ամերիկայում; նա ամեն տեղ շատ տխուր հետևանքներ ունեցաւ: Այս դէպքում ուշադրութեան առնուած չէր բնութիւնն, որի կարիքըն ու պահանջները: Երբ դպրոցը պահանջում էր աղջիկներից նոյն մտաւոր աշխատանքներն, ինչպէս տղաներից, որոնց հետևանքն եղաւ այն, որ այս դպրոցական պահանջները կատարելիս աղջկունք սկսան տկարանալ, դեղներես էին դառնում, թարշամ և միևնոյն ժամանակ անընդունակ իրանց ապագայ նշանակութեան համար: Այս պատճառով էլ եկան այն համոզման, որ պէտք է դաստիարակի բնութիւնն և հնթարկուիլ նորա պահանջներին և օրէնքներին, որոնք պահանջում են, որ կանոնաւորապէս կրկնուող որոշեալ ժամանակները կինոջ բնութիւնն հանգիստ վայելէ կամ գոնէ տղատրինի չափազանց հիպերից:

Վերոյիշեալ խորհրդածութիւնք պէտք է որ նպաստած լինին պարզելու համար այն սկզբնական հիմունքները, որոնցից առաջ է գալիս կինոջ աղատութեան վարդապետութիւնը: Այժմ մենք ուշք կը դարձնենք ձերբազատած կինոջ նոյն իսկ անձնաւորութեան վերայ: Ի՞նչ է վաստակում մինչև անգամ ընդունակագոյն կինն նրանից, որ նա անձնաւորւ է լինում աղատութեան գաղափարին և վարդապետութեան, որ քարոզեցին այդ մարգիկ, որոնք պետութեան և գերդաստանի համար հնարեցին, գոնե անօրէնութեան նոր աւետարան. ըստ որում կինն ինքն ըստ ինքեան չը հասաւ աղատութեան պէսոնալիզմին: Նա այդ այդ մարդիկներից ուսաւ և ընդունեց անգամ, որ նա ունի հանճար տարածելու այդ տեսութիւնը, վէպերի և պատմութեանց միջոցով, բայց և այնպէս առաջին զարկն ու այս յամենայն դէպս նա ստացաւ «պոպ ֆրէնչ» կուսակիցներից տղամարդիկներից և այս գործում նա հոգեպէս և մտաւորապէս գոյթակղուած, խաբուած կողմն է: Ի՞նչ է վաստակում կինը նրանից, որ անձնաւորւ է լինում ցնորքների ու երևակայութեանց, այն նշանակութեան և

մեծութեան վերաբերմամբ, որոյ համար իբրև թէ կոչուած է ինքը հասարակական կեանքի մէջ, և նրանից, որ նա գանգատում է այն ճնշեալ վիճակի դէմ, որոյ մէջ մինչև յայժմ գտնուել է, իբրև թէ քաղաքական հասարակութեան անարդարութեամբ։ Եւ ի՞նչ է ձեռք բերում նա (չենք կարողանում չափաւորուել այս խնդրի առթիւ), որ անձնասէր է լինում «պղպ պէրդի»։ Նա ոչինչ չէ վաստակում բայի այն, որ նորա վերայ կատարուում է յայտնի առացուածը թէ «որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեցի»։ Արդեհաև ամեն արարած, որ բարձրացնելով իրան կամենում է անցնիլ Աստեղծողի դրած սահմանն, ենթարկուում է խորին անպատուութեան և ընդ նմին ոչ միայն չէ հասնում կեղծ բարձրութեան, դէպի որը ձգտում է, այլ և պրկուում է այն արժանաւորութիւնից էլ, որի համար ինքը նշանակած էր։

Ջերբազատ կինը բոլոր զօրութեամբ ձգտում է ամեն վերաբերութեամբ հաւասարուելու այր մարդու հետ։ Նա արհամարհում է սովորական կինոջ սահմանաւոր վիճակը. նա երազում է արձակ հասարակական կեանքի մասին և դէպի սա է ուղղում իւր բոլոր զգայմունքները ու յանկութիւնները։ Բայց այսպէս նա վաստակում է միայն այն, որ տակաւ առ տակաւ դադարում է կին լինել։ Բայց և այնպէս եւանգոլ էլ չը պարապէր այր մարդուն պատկան գործով, նա երբէք տղամարդ չէ դառնում։ Եւ արդեհաև նա երբէք չէ կարող բոլորովին մերկանալ իւր կանացի բնութիւնից, ուստի և դառնում է մի սեռակի արուէգ—կէս այր, կէս կին և ոչ մէկը կատարեալ։ Նա թշնամութեամբ է վերաբերուում քրիստոնէական վարդապետութեան ամուսնութեան մասին, կնոջ հնազանդութեան մարդուն։ Նա ծաղրում է քրիստոնէական ամուսնութիւնն, իբրև մի հնացած հաստատութիւն և արական սեռի վերաբերութեամբ կամենում է անպայման հերքող լինքնուրոյն լինել։ Բայց հէնց այսպէս նա ընկնում է կեղծ կախման մէջ այր մարդկերանցից։ Քանի որում երբ նա իւր յարաբերութեանց մէջ տղամարդոց հետ ձերբազատուում է, նա մնատնում է, որ և այր մարդիկ նոյնն անում են նորա վերաբերութեամբ, որովհետև որքան էլ նորա չը շողոքորթէին կնոջ, որքան էլ չը գովաբանէին նորա գեղեցկութիւնը, հանճարն, նորա

մասամբ առաքելութիւնը, նախապաշարմունքներից ազատ նորա միտքը, այնու ամենայնիւ նորա լաւ գիտեն, որ կինն իրանից գերազանց չէ, այլ ստոր է և չէ կարող ազատ մնալ մի քանի կանացի թուլութիւններից, որ կինը իրանից բարձել է իւր ամենընտիր պաշտպանութեան ղէնքը տղամարդոց դէմ՝ այն է քրիստոնէութիւնն ու բնական ամօթխածութիւնն, որ նա՝ կինը պատռել է կանացի երկիւղածութեան և ամօչկոտութեան քօղն, ուստի և աւելի հեշտութեամբ կարող է աւար դառնալ յայտնի տեսակ յարձակմանց, որոնք նա քնաւ ակնքի առաջ ունեցած չէր: Գանգատանոյց ի՞նչ տեղիք կունենայ նա, եթէ նորա սիրոյը, անգիտակցաբար, բորբոքուած է իսկական սիրով դէպի մի տղամարդ, որին նա տալիս է ամենն, ինչ որ կարող է տալ և որ յետոյ (տղայնարդը) վիրաւորական անհաւատարմութեամբ թողնում է նրան և մնանում է նրան խորը խոցուած սրտի մենակութեան: Իսկական սէրը—այս է՛ն ապացոյցը նորա կանացի–ընկան—քաջածո՜ է նորա հոգոյ պարկեշտ: Այն ժամանակ նա սկսում է ապաւինել հաւատարմութեան պահանջներին, վշտանում է, գանգատում է՝ հաւատարմութեան խախտման մասին, ուրեմն և իսկապէս ազատան է որոնում ամուսնութեան պահանջների մէջ: Բայց չէ՞ որ նա ինքը—տարբերուելով իւր այլ քոյրերից, որոնք իրանց թուլութեան ղոհ գնացել էին, նա ինքն, առում ենք, վճռապէս անձնատուր եղաւ սուտ մարգարէների վարգապետութեան, որոնք ծաղրում են հաւատարմութիւնը սիրոյ մէջ, իբրև մի հնացած երևոյթ, որովհետև նոցա կարծիքով սէրը հիմնուում է միայն սրտի ազատ ձգմանից վերայ և կորչնում է ամեն իրաւունք, երբ միայն անհետանում են այդ ձգտումները: Անշուշտ նա, իբրև կին, հաստատապէս հաւատի էր հեռևեալի մէջ. թէ այդ դէպքում սէրն երկու կողմից էլ այնպէս զօրեղ է, որ հաւատարմութիւնը պէտք է պահպանուի և անհաւատարմութիւնը բնաւ տեղի չէ կարող ունենալ: Բայց այս հաւատիութիւնը լոկ կանացի յնորը էր:

Բայց եթէ մինչև անգամ ձերբազատ կինը չէ ընկնում վերևը նկարագրած դրութեան մէջ (լինում են այնպիսի ձերբազատ կանայք, որոնք այն աստիճան ինքնասէր են ու հպարտ, որ երբէք չեն

ղգում՝ խակական սէր)· այնու ամենայնիւ նորա վերայ կատարում են «ոչ քաջչացս-ցանէ զանձն՝ խոնարհէսցի» խօսքերը: Նորա կեանքում կը հանդին ժամեր ու րոպէներ, երբ նա կղգայ խորին, ներքին թշուառութիւն, անտուն և անապատական էակի դրութիւնը կղգայ, երբ նա իւան Հոդիչ կարտած քոյրի նման կը տեսնէ, որ ոչ մի տեղ ընկուել և արմատ թողնել չէ կարողանում: երբ նա երևակայած բարձրութիւնից և կեղծ-ազատ կեանքից ի զուր կը ձգտի դէպի խաղաղ և համեստ ընտանեկան կեանքը գերդաստանի գոգում— դէպի մի կեանք, որ կապուած է որոշ պարտականութեանց կատարման և խղճի օրէնքների հետ:

Մենք վերջացնում ենք մեր խորհրդածութիւնքը կնոջ ազատութեան մասին հետևեալ խօսքերով· կրնան, որ ամուսնութեան մէջ հնազանդում է Աստուծոյ պատուիրանին, ամենևին զուրկ չէ ազդեցութիւնից հասարակական կեանքի վերայ: Նա ունի զօրաւոր-ներգործական ազդեցութիւն եկեղեցու և պետութեան, գրականութեան և արհեստի վերայ: Բայց այս ազդեցութիւնն անմիջական չէ, այլ անուղիղ—կաղմաւոր է: Նա իւր մարդու օգնականն է, նրան հաւատար և մեծ կանգնած, շատ վերաբերութեամբ և զանազան միջոցներով նա կարող է նպաստել իւր մարդու ձգտումներին և գործունէութեան: Այդ—նա կարող է իւր շրջանում ներգործել, որպէսզի հասարակական գործերի վերաբերմամբ, որքան որքա իրան հասանելի են և հեռաքրքրական, լուսաւորութեան մէջ կազմուի ընդհանուր կարծիք և գաղափարութիւն, ակրասեռող ազատամտութիւն: Կնոջ ազդեցութիւնը հասարակական կարծիքի վերայ, թէ լաւ և թէ վատ մնքով, յաճախ եղած է նշանաւոր և յոյժ տարածուած, բայց ամենից առաջ պէտք է մանաւանդ լինել հասարակական կեանքին, եկեղեցու և պետութեան վերայ ունեցած կնոջ ազդեցութեան մի եղանակի վերայ—ազդեցութեան վերայ, որ չունի տղամարդը, զօրութեան վերայ, որ մարդկային հասարակութեան մէջ ամենամեծն է: Բոլոր ազգայ սերունդն իւր զարգացման առաջին աստիճաններում՝ ամբողջապէս գտանուում է կնոջ ձեռքերում: Եթէ մայր նա մեծագոյն ազդեցութիւնն ունի հասարակական կեանքի վերայ, այն է մեծ ազդեցութիւն ապագայի վե-

բայ: Կարիք չը կայ բացատրելու թէ ինչով պարտական է եկեղեցին քրիստոնեայ մօրը: Կարիք չը կայ կրկնելու, որ եկեղեցւոյ մեծ վարդապետները վկայել են այն կրօնական տպաւորութեանց մասին, որ իրանց մանկութեան ժամանակ ստացել են իրանց մայրերից, տպաւորութեանց, որոնք պատճառ սերմեր են եղած նոցա կեանքում: Չը կայ կարիք բացատրելու թէ ինչ է պարտական Հայրենիքը մայրերին, որոնք քնքոյշ սէր են ազդել իրանց զաւակներին դէպի իրանց Հայրենի երկիրը: Բայց հէնց այն պատճառով, որ կրնն այդպիսի մեծ ազդեցութիւն ունի ապագայ սերնդի վերայ, նորա կրթութեան մէջ կրօնական և ազգային տարրը պէտք է լինեն հիմնական տարրներ: Մայրենի լեզո՜ն, հայրենիք բառապէնճան ջրականո՜ւն և նորա պատմո՜ւն ա՜ւելի մեծ կշիռ ունին մարդուն աւելի ազատ ասպարէզ իւր իսկական ընդունակութիւնքն և իրաւունքները գործադրելու, որոնք իրաւամբ նրան պատկանում են: Մի քանի երկրագործական պարապմունքներ, որոնք սկզբում կատարում էին ազատմարդիկ, մեր ժամանակում կատարում են և կանայք, այստեղ մենք հասկանում ենք աշխատանքներն, որոնք ոչ միայն գործատաններում, այլ և ապարանքներում և հեռագրատներում և այլն են կատարում: Ա.յսպիսի նորաձեւութիւնը կարելի է վերաբերել հինջ ազատութեան քաղաքական կողմին: Մեզ վատ հասկացած կը լինի նա, ով մեզ կը համարէր այս և սորա նման նորաձեւութեանց հակառակորդ: Ա.յնպիսի աշխատանքներ, որոնք կանայք կարող են կատարել նոյն յաջողութեամբ, ինչպէս և ազատմարդիկ, պէտք է իրաւամբ թոյլ արուի նրանց կատարելու: Բայց յամենայն դէպս այդպիսի կանացի աշխատանքը սակաւ ցանկալի է, ազատմարդոց հետ մրցութիւն անելու այդ եղանակը պարտնակում է իւր մէջ մի բան, որ կարծես անյարմար է հինջ քնաւորութեան: Ա.յն ինչ այդպիսի մրցութիւնն առաջ է գալիս ապրստամի միջոց

գտնելու համար և հիմնուած է ժամանակակից հասարակութեան նեղ վիճակի վերայ, այն էլ մասամբ այն հանգամանքից է աւաջ գալիս, որ շատ կանայք ներկայումս մնում են առանց ամուսնութեան և մասամբ էլ նրանից, որ պատահում են այնպիսի ամուսնութիւններ, ուր տղամարդն միայն իւր աշխատանքով անձեռնհաս է լինում պահպանել իւր ընտանիքն. ուստի և կինն էլ ստիպուած է դուրս գալու իւր համար վաստակի միջոց և գժբաղդաբար յաճախ անից դուրսը: Բոլոր այս հանգամանքները կապ ունին աւելացրած ներկայ հասարակութեան թշուառ վիճակի հետ, որ աւելի տուել է ներկայ ժամանակի ընկերական առեղծուածի (աշխատաւորների-միջակների խնդիր) և կազմում են «կնոջ խնդրի» երևոյթներից մէկը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԵԱՆՔ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՒՐ.

Երբ ամուսնութեամբ կազմուում է գերդաստան, սորա հետ միասին ծագում է և ընտանեկան կեանքն և գերդաստանականութեան զգացմունքն, որ ազդւորում է և միացնում է այս փոքրիկ ամբողջութեան՝ այս ընտանեկան շրջանի անդամներին և արտայայտւում է ընտանեկան սիրոյ մէջ, նոյնպէս գերդաստանի յարաբերութեանց մէջ այլ հասարակական շրջանների հետ: Գերդաստանական սէր ասելով մենք հասկանում ենք ոչ միայն ընտանիքի անդամոց փոխադարձ սէրն, այն է ծնողաց սէրն առ իրանց զաւակներն և ընդ հակառակն, եղբարց և քոյրերի սէրն առ միմեանս և այլն, այլ և իւրաքանչիւր անդամի ընդհանուր սէրն առ այդ ամբողջութիւնն, այդ ընտանիքն, որոց հետ ընդարձակ մտքով միացնելու է և այլ այլ մերձաւորներին ու ազգականներին: Այդ սէրն ընդհանուր սէրն է դէպի ընտանեկան օճախն, սորա բոլոր սխալ և ուրախ պարագաներով, դէպի սրբազն ընտանեկան կարգն և կենցաղավարութեան եղանակը, դէպի այն ընտանեկան սովորութիւնքն ու բարքն, դէպի այն ընտանեկան ժողովներն սրբազան ժամերին, դէպի այն փոքրիկ ընտանեկան սեռնախանձութիւնք, որոնց կենդրոնը քրիստոնէական

գերդաստաններում կազմում է ամեն տարի կրկնուող զրխատոի ծննդեան և յայտնութեան տօնն, այս մանկական տօնը. բայց սա ի հասակատրների տօն էլ է, որոնք որքան հասակն առնում են այնքան աւելի ուրախութիւն են զգում այդ տօնին, իւրաքանչիւր գերդաստանում այս տօնն իւր առանձնութիւնն ունի և նորա պատկերը խորը տպաւորուում է յիշողութեան մէջ:

Ընտանեկան կանոնաւոր կեանքն և իսկական ընտանեկան սէրը կարող են երևան գալ միայն այն ժամանակ, երբ կայ պատշաճաւոր յարաբերութիւն հեղինակութեան և յարգանայ մէջ, իշխանութեան և հնազանդութեան մէջ: Ուր չը կայ հեղինակութիւն, չը կայ կամք, որ կարգաւորէ ամբողջն, ուր սան մէջ չը կայ կարգ, այլ կայ միայն կեղծ անհատական ազատութիւն, ուր ընտանիքի անդամներից իւրաքանչիւրն անում է այն, ինչ որ իրան հաճոյ է, վարուում է ըստ իւր կամայ և միայն իւր բաւականութեանց եռևիյն է. կամ ուր երևան են եկած ազատութեան սխալ գաղափարներն, ուր զաւակներն ու ծառաներն հերքազատներ են և հաւասար են իրանց կարծում ծնողաց և տէրերի հետ— այնտեղ և ընտանեկան կեանքը ի հիմանց խախտուած է: Հակառակ ծայրահեղութիւն լինում է, երբ հօր կամ մօր հեղինակութիւնը գերդաստանում այն աստիճանի սիրտպետող է լինում, որ նորա մէջ սաւառնում է երկիւղի ոգին, ամբողջ գերդաստանի վերայ մի բեռն է ծանրացած և այնտեղ կարգը ծանրութիւն է և նեղութիւն: Խրերի բուն կանոնաւոր վիճակն այն է, երբ հեղինակութիւնն իշխում է միացած սիրոյ հետ, ուստի և ունենում է արդիւնաւոր, վերկարար աղդեցութիւն, այնպէս որ իւրաքանչիւր անհատականութիւն զգում է, որ իւր իրաւունքները բոլոր առանձնայատկութեամբ ճանաչուած են և ինքն կատարեալ ազատութիւն է վայելում զարգանալու հասնելու որոշ սահմանների մէջ, ուր հնազանդութիւնը ծնողաց (կամ տէրերի) կամքին անխղճելի կերպով կապուած է պատուոյ և յարգանայ վերայ հիմնուած հաւատարմութեան հետ, կամ այլ խօսքերով ուր պահպանում է կանոնաւոր յարաբերութիւնն իշխանութեան և հնազանդութեան գերդաստանի անդամների մէջ, պարտականու-

թեան և սիրոյ անքակտելի կապերով և ուր այս իրրև բնական և հաւասարալի մի երևոյթ է համարուում։

Բայց իսկական ընտանեկան կեանքն և սէրը հիմնուում է ոչ թէ գերդաստանական շրջանի մէջ պահպանուող հեղինակութեան և յարգանաց հաւասարակշռութեան վերայ միայն, այլ և նորա վերայ, որ այդ ընտանեկան ոգին ինքն էլ հնազանդութեան և յարգանաց պատշաճաւոր յարաբերութեան մէջ է մնում այլ շրջանների հետ, այն է, հասարակական զօրութեանց հետ, որոնք գերդաստանից բարձր են։ Անհատական ընտանիքն սկիզբն է և ոչընչութիւն բոլոր բարոյական աշխարհի, հիմն այլ հասարակական կազմակերպութեանց։ Բայց ընտանիքը չը պէտք է մեկնի, միայնանայ. նա բոլոր հասարակական շրջաններից ոչ միայն պատշաճութիւն և հնազանդութիւն պիտի գտնէ, այլ և մտնէ և բեղմնաւորութիւն։ Ոչինչ մարդկային նորա համար օտար չը պիտի լինի։ Աւանդ կենդանի համակրութեան տաք ընդհանուրն ընտանեկան կեանքն և ոգին գտնում է անհոգի և անսիրտ անարդարութիւն և ինքնասիրութիւն։ Ընտանեկան միայնութիւնն և ինքնասիրութիւնը մեղքի արդիւնք է, որ կորստաբեր է մարդկութեան կեանքի համար։ Պատմութիւնը պատմում է մեզ թագաւորների և կառավարիչների մասին, որոնք իրանց ընտանեկան շահերին զոհ են բերել պետական շահերն և ընտանեկան վէճերի պատճառով թշնաւորութեան մէջ են գցել ազգերին և սրանց կորստաբեր պատերազմների մէջ խառնել. այս հանգամանքը նկարագրել է Շէկսպիրն իւր պատմական բանագործութեանց մէջ։ Պատմութիւնը պատմում է և ազնուական դասի գերդաստանական ինքնասիրութեան մասին, որ ամբողջ պետութիւնը կորստեան մատնած է։ Նա պատմում է պապերի և այլ եկեղեցական կառավարիչների նեպոտութեան (եղբօր կամ քեռորդւոյ իշխանութիւն եկեղեցական գործերում) մասին։ Ոչ միայն ընդհանուր պատմութիւնն, այլ և առօրեայ կեանքն էլ կարող է ընտանեկան ինքնասիրութեան բազմաթիւ օրինակներ ցոյց տալ։ Մենք խօսում ենք ոչ միայն իրաւունքի և արդարութեան աշխարհս բռնաբարութեան և խանգարման մասին, երբ զորօրինակ մի գերդաստան անարդար դատաստանա-

կան դատավարութեամբ աշխատում է մի այլ գերդաստանի կայքն իրան սեպհականել—այս ակներև խախտումն է Աստուծոյ պատուիրանին՝ «Մի ցանկանար տան ընկերդի քո» և այլն: Մենք հանդէս ենք բերում այն անարդարութիւնն, երբ ընտանեկան սէրն մեկուսանում է հասարակական կեանքի շահերից և այսպէս յանցաւոր է գտանուում նշանաւոր պատասխանատուիւնք չը կատարելում: Կան մարդիկ, որոնք վարում են ընտիր օրինակելի ընտանեկան կեանք. բայց այնպէս գրաւուում են նորանով, որ նոցա մէջ գրեթէ ամենևին չենք նկատում հասարակութիւն և սէր դէպի իրանց հայրենեաց և հասարակութեան շահերը. այսպիսի գերդաստանական կեանքն ամենևին օրինակելի չէ: Այն սպաշտօնական անձն, որ թէև համբաւում է գերդաստանի լաւ և հոգատար հայր, բայց ընդ նմին անձիշդ է իւր պաշտօնավարութեան մէջ կամ կատարում է իւր պաշտօնը առանց եռանդի և անաչառութեամբ, ցոյց է տալիս իւր մէջ բարոյականութեան պակասութիւն. իսկապէս այսպիսի մարդն և ոչ իսկ գերդաստանի լաւ հայր է, որովհետև իւր թոյլ և անտարբեր պաշտօնավարութեամբ և բարձր ձգտումների պակասութեամբ վատ օրինակ է ցոյց տալիս իւր գերդաստանին: Յայտնի բան է միւս կողմանէ կարելի է ասել, որ կան այնպիսի անձինք, որոնք այնպէս գրաւուում են հասարակական կեանքով, որ տուն չեն անում և բարձի թողի անում ընտանեկան կեանքը: Այս դէպքում իւրաքանչիւր մարդու խնդիրն ու պարտքն է հետևեալը. «Պէտք է միշտ ջանալ կեանքի ամեն շրջանների ստիպողութեան պահանջները կատարելու»:

Ամենից առաջ ընտանեկան սէրը պէտք է հնազանդի Աստուծոյ ազգայութեան, որ մարդկային կեանքի բարձրագոյն և վերջին նպատակն է: Երկրիս վերայ Աստուծոյ ազգայութեան տարածման և հոգևոր իշխանութեան համար ընտանիքն ամենէական միջոցներից մէկն է: Երբ քրիստոնէութիւնն աշխարհ եկաւ, նա շատ անելում խանգարեց ընտանեկան խաղաղութիւնը, նոյն ներգործութիւնը նա անում է և այժմ երբ այն գերդաստաններում, որոնց դէռ քրիստոնէութիւնը կամ բնաւ չէ հասել կամ նոցա մէջ տկարանում է սրտագին ըստ ուղղութեան միայն քրիս-

առնէ մարդիկ, ու այդպիսի ընտանիքներում մի քանի անդամներ մէջ զարթուած է կենդանի հաւատ. և այժմ էլ նոր կեանքն ի Քրիստոս և նոր դաւանութիւնն Քրիստոսի միայնում է գերդաստանի մէջ ազգակից և երկպառակութիւն։ Ա. յոյների դէպքում կատարուած են Քրիստոսի խօսքերը թէ «Մի համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր։ Քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ, և դուստր ի մօրէ իւրմէ և զհարսն ի սկեսրէ իւրմէ։ Եւ թշնամիք առն ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի, և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի» (Մատ. ժ. 34—37), թէև սրանից առաջ են գալիս դժուարութիւնը և ծանր յարաբերութիւնը, թէև լինում են յաճախ սխալներ գերդաստանի այն անդամների կողմից, որոնք ոչխատել են քրիստոնէութեամբ, որոնք երբեմն անընդունելապէս արտայայտում են իրանց քրիստոնէութիւնն և իրանց բոլոր վարքով ցոյց են տալիս անսիրտութիւն. բայց և այնպէս այն հանգամանքն, որ գերդաստանի առաջնային ազդակից կեանքը խանգարում է Աւետարանով, բոլորովին կանոնաւոր բնական երևոյթ է և համապատասխան Աստուծոյ անօրէնութեան։ Բոլորովին անարդար են այս հանգամանքի վերաբերմամբ նաքա, որ կամենում են արդարել ընտանիքիս քրիստոնէութիւնն Քրիստոսի խաղաղութեամբ հանդերձ և կամ իրանց նրանից հեռու պահել յարգելով ընտանեկան խաղաղութիւնն և միաբանութիւնը, կարծես բոլոր բարիքը սորա մէջ է։ Խաղաղութեան այսպիսի խանգարումն ճգնաժամ է, որ ցնդին ինքը յարատևանում է գերդաստանի մէջ այն նպատակով, որ հոգւոյ մէջ թափանցի մեծ խնդիրը՝ թէ ի՞նչ է ճշմարտութիւնը, ի՞նչ պէտք է անեմ որ երջանիկ լինեմ և որպէսզի ամեն բոլոր բնակիչք խորհեն թէ յիրաւի ինքը կարող է խաղաղութիւն բերել թէ իւրաքանչիւր անդամին և թէ ամբողջ գերդաստանին։

Ծնող ներ եւ զաւակունք։ Ծնողների պարտականութիւնն է դաստիարակել իրանց զաւակը. իսկ զաւակը իրաւունքն է— դաստիարակութիւն ստանալ։ Որովհետև նորածին մանուկն աշխարհ է գալիս ոչ միայն իբրև անդամ գերդաստանի, այլ և իբրև ապա-

գայ անդամ պետութեան և եկեղեցւոյ, մարդկային թագաւորութեան և Աստուծոյ արքայութեան, ուստի և նորա գաստիարակութիւնն անշուշտ որոշեալ սահմաններուամ պէտք է ենթարկուի պետութեան և եկեղեցւոյ հսկողութեան, նա չը պէտք է յանձնուի ծնողաց կամայականութեան ամենայն կողմանէ։ Զաւակները ծնողաց սեփականները չեն։ Բայց յայտնի բան է ծնողք ունին իրաւունք և պարտական են ստանձնելու զաւակաց հոգատարութեան գլխաւոր բաժինը։ Քրիստոնէական գաստիարակութիւնը պէտք է կատարուի մկրտութեան հիման վերայ և նորա խնդիրն ու նպատակը հետևեալն է. «Մանկան վերայ պիտի կատարուի Քրիստոսի կամքը, նա պիտի առաջնորդուի դէպի այն, որ Տեառնի յաւիտենական կենաց, որոյ համար կոչուած է նա մկրտութեամբ. բայց այս խնդիրը բնաւ սպգելք չէ, այլ և պահանջում է, որ մանուկը գաստիարակուի և բնական կեանքի համար երկրիս վերայ։ Քրիստոնէական գաստիարակութիւնը, գլխաւորապէս, նպատակ ունի կրթել մանկանց կամքը, դնել նոցա բնաւորութեան հիմքը, որ անշուշտ հակառակ է մի քանի ծնողաց կարծքին, որոնք գաստիարակութեան գլխաւոր գործը համարում են պատգայնել մանկանց մնաւոր ընդունակութիւնքը միայն և տալանդները։ Մանուկները պէտք է պատուոյ և հնազանդութեան հոգւով, յարգանաց և սիրոյ հոգւով, հաւատով յԱստուած և առ փրկիչն իւրեանց գաստիարակուին և այս նպատակին սիրտ ենթարկուի նոցա հոգևոր, մնաւոր և մարմնաւոր ընդունակութեանց պարզացումն։ Հնմարիա գաստիարակութիւնն աշխատում է ղգուշանալու թէ չափազանց խստութիւնից և թէ աւելորդ քաղցրութիւնից, որ թուլութիւն է։ Շատերն հանգէս են բերում ստրկերութիւնը սեռականների, որոնք գաստիարակուել են ծեծով և այլ սեռուններու, որոնք գաստիարակուել են գգուանքով ու քաղցրութեամբ— և կարելի էր ապացուցանել, որ խստութեամբ պատիժների ու գանի օգնութեամբ, օրէնքի խիստ պատժով գաստիարակուած սեռուններն աւելի լաւ պատրաստ են տալ քան գլգգուանքով գաստիարակուածները, որոնք ահել են անօրէնութեան, կամայականութեան և փոփկութեան մէջ։ Բայց պէտք որ գաս-

պիարակութիւնը կը կատարուի Քրիստոսի ոգւով, այնքան նա աւելի իւր մէջ կը միացնէ այդ երկու տարրները՝ խստութիւնն ու սէրը, հեղինակութիւնն ու ազատութիւնը, օրէնքն ու Աւետարանը։

«Աղաքեալը պահանջում է, որ մանկունք դաստիարակուին Տիրոջ խրատով և ուսմամբ» (Եփես. ը. 4)՝ բայց այս պահանջի հետ միացնում է և զգուշացումն, որ հարք չը զայրացնեն որդոց։ Անտարակոյս դաստիարակութիւնը չէ կարող առանց խստութեան կատարուիլ, որովհետև մարդուս կանքը բարեաց՝ այդ ընդհանուր—պարտաւորական սկզբունքի համար կրթելիս, հարկ է խորտակել կամայականութիւնը։ Սորա համար գլխաւոր միջոցն է վարժել մանկանց աշխատասիրութեան և կարգի մէջ, հնդկութեան և կանոնաւորութեան մէջ, կենցաղավարութեան ամեն եղանակում։ Պատիժներից խուսափել անհնարին է, բայց պատժողը սէրը պիտի լինի և հարկ է խորշել կրքից, կամայականութիւնից և անարդարութիւնից, պակասի մանուկները չը զայրանան և չը վշտանան։ Ըստ սրում՝ մանուկներն ի բնէ չափազանց ընդունակ են զանազանելու իրանց վերաբերութեամբ արդար վարմունքն անարդարից, կամայականից։ Բայց խստասրտութեան և պատիժների ժամանակ էլ բարձրագոյն նպատակը պիտի լինի ոչ թէ այն, որ մանուկներին տիրէ երկիւղի ոգին, այլ ճշմարիտ յարգանաց և սիրոյ հոգին, որ նոքա բարի գործեն, որովհետև բարին նրանց ուրախացնում է և զգուանքը դէպի չարը և մանաւանդ դէպի ամեն տեսակ անարդարութիւն, կեղտոտութիւն և անարբութիւն նոցա մէջ բնական դառնայ։ Բայց երբէք պէտք չէ մանկանց մէջ զարգացնել յարգանաց զգացմունք դէպի իրանց ծնողները միայն, այլ և դէպի ամենն, որ արժանի է յարգանաց, որքան այս հասանելի կը լինի նոցա գիտակցական կարողութեան։ Եթէ ի միջի այլոց ներկայացնում լսում են գանգատներ, թէ երիտասարդ սերունդը սակաւ յարգանք է ցոյց տալիս մեծերին՝ հասակաւորներին, դա ծագում է ըստ մեծի մասին նրանից, որ չէնոյ ծնողները և առհասարակ ներկայ սերնդի հասակաւորները իրանք շատ սակաւ յարգանք են զգում դէպի ամենն, ինչ որ արժանի է յարգանաց, այլ ընդհակառակն առաւելապէս ներշնչուած են քննադատական և աւերիչ ուղղութեան ոգւով։ Այս դէպքում՝ օրի-

նակը զօրաւոր ազդեցութիւն ունի։ Եթէ դուք ցանկանում էք ձեր զաւակներին դաստիարակել յարգանաց և մեծարանաց ղգացմամբ դէպի ամենն, որ ինչ մեծ է և գեղեցիկ կեանքի մէջ, իրանք էլ ունենալիք նոյն յարգանքն ու մեծարանքն և ձեր զաւակներին մի այլ առէք ամենօրեայ օրինակ արժանի յանդիմանութեան և մեծամտութեան, որ ոչընչով գոհ չէ և չունի իւր համար մի գաղափար։ Վարակիչ ախտն մանկանց հաղորդուում է աւելի շուտ, քան երևակայում են։ Այն ժամանակ բոյսերի վերայ երևում է այն մեղրաթրիքան, որ ապագայ է լինում նոցա ամէոդութեան։

Մանկան դաստիարակութիւնը կրօնական ոգւով և կրօնական ղգացմանն զարգացումն մարդկային սիրենական հասակում ծը պատասխանութիւնն է։ Ինչպէս որ մայրը տալիս է մանկան առաջին մարմնաւոր սնունդն իւր ստինքից, նոյնպէս նա պիտի տայ մանկան և սորա առաջին հոգևոր սնունդն իւր սեպհական սրտից։ Որքան որ ցաւալի է, երբ մայրն անձամբ չէ կարողանում կերակրել իւր մանկան, աւելի ևս ցաւալի պիտի լինի, եթէ նա անկարող է նրան կերակրել հոգևոր կողմից, այլ որա համար էլ ստիպուած է վարձել դայեակ և կամ բոլորովին աւանդ անդի թողնել նրան։ Մայրը պէտք է ուսուցանէ մանկան աղօթել և աւանձնորդէ աւ փրկիչն, նա պէտք է հաղորդէ աւետարանի պատմութեան աւանձին տարրներն, որոնք շատ դիւրըմբռնելի և հասկանալի են մանկական մտքի համար։ Հետևեալ շրջանում ուսուցման պէտք է ունենայ աւելի կենսաւորոյց և հրահանգիչ բնաւորութիւն, բաւիս ճիշդ նշանակութեամբ—հօր թէ դպրոցի միջնորդութեամբ կրկ կատարուի այս ուսուցումն։ Բայց աւհատարակ կանոնն այս պիտի լինի. պէտք է զգոյշ լինել ամենօրեայ կեանքում չափազանց շատ բարոյական խրատներ հաղորդելից, յոյժ շատ խօսելից կրօնի և քրիստոնէութեան վերայ, այս բոլորովին իրական չի լինիլ, խակ երբեմն և վնասակար կը լինի։ Երկարաբան ճառից աւելի ներգործում է մանկանց վերայ, երբ տեսնում են հօր և մօր մէջ հաւատի պինդն, եթէ նոքա տեսնում են թէ ինչպէս իրանց ծնողներն ամենօրեայ պարագաների մէջ, կեանքի ամեն վախճանական հանգամանքներում գտնում են իրանց համար նեցուկ և ապաստանարան, միակ միխիթարութիւն

միայն Աստուածի մէջ։ Ամեն երկար խրատներից ու յորդորներից աւելի զօրաւոր և ազդու է լինում յարմար դէպքում արտայայտած մի խոստովանութիւնն ու դատապարտութիւնն Աստուծոյ, որ գոյ է և մի քանի խօսքով է միայն արտայայտած, բայց առաջ է եկած անկեղծութիւնից, կեանքից և կեանքի սկզբնական զօրութեամբ է ներշնչած։ Դժուարին է վարժել երիտասարդներին, որ նորա կանոնաւորապէս այցելեն եկեղեցին, բայց այս դէպքում պէտք է զգուշանալ, որ այդ նորան մի ասելի ոտիպտնիք չերևի։

Մանկան հոգևոր կեանքի և նորա արտի վերայ հոգատարութեան հետ միասին, հոգս քաշելու է և նորա մարմնաւոր բարեկեցութեան վերայ։ Մարմնոյ առողջութիւնը նեցուկ է հոգևոր կեանքի կանոնաւոր զարգացմանն համար, միակողմանի-հոգեպաշտական դաստիարակութիւնից առաջանում է ոչ միայն թոյլ մարմին, այլ և թոյլ և հիւանդոտ հոգի։ Ոչքան էլ և միակողմանի են Մուսոյի և սորա նմանների դաստիարակութեան եղանակները, բայց էլի նորա մեծ արդիւնք են ցոյց առած նրանով, որ ուշք են գարձրած այն հոգատարութեան վերայ, որ դաստիարակութեան ժամանակ հարկ է գարձնել մարդուս մարմնաւոր կողմի վերայ էլ, այսպիսիք են զորավրինակ հոգայարձութիւնը անմգարար կերակրի, մարմնոյ մարզուԹեան, լողանալու վերայ, արտաքին զգայմանց զարգացման վերայ և այլն։

Մենք անկում ենք և ջուր ասիս, իսկ Աստուած առնէնում է (Աս. Կորնթ. գ. 7)։ Այս խօսքերը կարելի է վերաբերել և դաստիարակութեան գործին։ Որ անհնարին է չափազանց մեծ յոյս դնել դաստիարակութեան վերայ — այդ ապացուցանուած է այն փաստով, որ մի և նոյն ծնողաց և մի և նոյն դաստիարակութիւնը ասացած մանուկները կարող են ապագայում բոլորովին միմեանցից տարբեր լինել, այս փաստը մենք տեսնում ենք աւելի մարդկային ամենանական զոյգի կեանքում՝ Կայէնի և Աբէլի մէջ։ Մանուկներից մէկը կարող է յաջողակ լինել և բարի մարդ դառնալ, այն ինչ միւսն անյաջող է լինում և չար մարդ է դառնում գալիս։ Այս հանգամանքը ցոյց է տալիս մեզ աղաւաւթեան գաղտնիքն և այն խորհրդաւորութեան է հասցնում որ իւրաքանչիւր անհատ

ինքն իրանից անում է, առաջացնում այն, ինչ որ ինքն է: Միւս կողմից մենք չենք կարող և չը պիտի մերժենք այն ճշմարտութիւնն, որ բնաւորութեան զարգացումն պայմանաւորւում է տարաբնի աղդեցութիւններով, և որ շատ մանուկներ կորել են վատ դաստիարակութեան պատճառով, թէև մնասմբ նոցա քաղդի ու վիճակի յանցանքն իրանց վերայ է: Այս մասին ծնողաց սրբազան պարտականութիւնն է անել այն, ինչ որ կարող են, որովհետև այս գործում նոքա պատասխանատու են և պէտք է պատասխան տան Աստուծոյ առաջ: Մանկանց դաստիարակութեան գործում գլխաւոր դժուարութիւնն այն է, որ յայտնութիւնը կախուած չէ միայն ուսումից և խրատներից, թէև նոքա էլ անհրաժեշտ են, այլ ծնողաց անձնական կեանքից, անձնաւորութեան այն ղօրութիւնից, որ նոքա կարողանում են արտայայտել իրանց զաւակների վերաբերմամբ: Ուսոի և շատ դէպքերում ծնողները խոնարհութեամբ խոստովանում են, որ չեն հասած հասունութեան իրանց պարտականութեան համար, որովհետև հէնց նոքա իրանք դեռ անկատար անձնաւորութիւնք են: Ինչպէս մենք հեզութեամբ խոնարհում ենք, երբ մեր զաւակների մէջ մեր առաջ ներկայանում են մեր թերութիւնքը:—Ուսոի և նոքա, որոնք կոչուած են դաստիարակ լինելու անդադար պէտք է դաստիարակեն իրանք իրանց էլ և ասանան կրթութիւն Աստուծմէ, նորա բանի միջնորդութեամբ և առաջնորդութիւն, նորա պատիժների և մխիթարութեանց միջնորդութեամբ:

Դաստիարակութեան նպատակն է զաւակներին ոչնա վիճակից հասցնել հասունութեան վիճակն և երբ հասնում է այս հասունութեան վիճակն, երբ զաւակները մինչև անգամ իրանք դառնում են ընտանիքի հայրեր, այն ժամանակ զադարում է հնազանդութեան յարաբերութիւնն, որ մէջ դտնուում են զաւակները ծնողաց վերաբերմամբ: Բայց եթէ և զադարում է հնազանդութեան յարաբերութիւնը, չը պէտք է զադարի յարգանաց և մեծարանաց յարաբերութիւնը. սա պէտք է շարունակուի ամբողջ կեանքը: Եթէպէտ զադարում է ծնողաց իշխողական յարաբերութիւնը, բայց չը պէտք է զադարի նոցա սէրը դէպի զաւակները: Այլ այսուհետ

էլ կեանքը մեզ յաճախ ցաւալի հակասութիւններն է ցոյց տալիս նոքա, ինչ որ պիտի լինէր։ Հասակաւոր զաւակներն, որոնք գերդաստանի հայր են դարձած, ցոյց են տալիս իրանց զառամեալ ծնողներին ոչ-յարգանք և ապերախտութիւն։ Իր որքայի վիճակը (Շեկսպիրի յայտնի ողբերգութեան մէջ) կրկնուում է և՛ քաղաքացի և՛ գիւղացի ընտանեաց մէջ էլ ուր զառամեալ ծնողներն իրանց կալուածքները յանձնում են զաւակներին և վախարէն շնորհակալութեան այս վարմունքի համար զաւակները վարուում են նոցա հետ իբրև օտար հայտակերների հետ, որոնք իրանց համար բեռն են։ Ամեն ժամանակ և հասարակութեան ամեն դասակարգերում մենք հանդիպում ենք ծերունիներին, որոնք Իր թագաւորի մէջ աեսնում են իրանց անձնի և իրանց վիճակի պատկերը։ Միւս կողմից կեանքի մէջ մենք աեսնում ենք և այնպիսի ծնողներ, որոնք իրանց հեղինակութիւնը սարաճում են պաշտաճաւոր սահմաններից դուրս էլ։ Այսպէս էլ ղորօլինակ լինում են մայրեր, որոնք բնաւ թոյլ չեն տալիս իրանց զաւակաց ազատութիւն վայելելու, թէև ոքա կատարելագոյնակ և լինէին։ Նախանձոտութեամբ նայում են իրանց որդոց ամուսնութեան վերայ, որովհետև իրանք այլ և այլ չեն կարողանում նոցա հանգրութեան առարկայ լինել նախկին չափով։ Լինում են սկեսուրներ, որոնք անընդհատ յանդիմանութիւններով և քննադատութեամբ իրանց հարսերին անկատարելագոյնակ մանկանց շարքն են դասում և խառնուում են նոցա ընտանեկան գործերի մէջ։ Այս վերաբերութեամբ էլ պէտք է պահպանել պատշաճաւոր սահմանն և յիշել որ սէրն ոչ ոքին չէ խնայում և որ հասակաւոր սերունդը մանաղ սերնդի վերաբերմամբ յաճախ յիշելու է ս. Յովհաննէս Մկրտչի խօսքերը՝ թէ «Նմա պարտ է աճել և ինձ մեզմանալ» (Յովհ. գ. 30)։

Ծնողաց և զաւակաց յարաբերութեանց մասին խօսելուց յետոյ, մենք չենք մոռանում որ լինում են և ամուլ ամուսնութիւններ։ Խորայէլացոց մէջ մեծ թշուառութիւն և նախատինք էր համարուում եթէ կինը չէր ծնում զաւակներ։ Ուստի և արդար եզիպտաբէթն իւր ծերութեան ժամանակ յղիանալով ասում է. Ջինչ

գործ գործեայ ընդ իս ՏԷր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ (Ղուկ. ա. 25)։ Ա յատեղ ամենանուաթիւնն, որոյսքոյ իւր նշանակութեան ունի և մի այլ նպատակ. այն է՝ նա նշանակուսամ է Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը բազմացնելու համար, որին իւրաքանչիւր ամենանական զոյգ պիտի տար իւր աւանդն, ընդ նմին և ամենայինները իրանց զաւակների միջնորդութեամբ կարծես պարտական էին շարունակելու իւրեանց գոյութիւնն երկրիս վերայ։ Աստուծի հանճարեղութեամբ և միևնոյն ինչ նորա պահանջով Աբրահամն, հաստատագետ հայրն, առնում է հարճ, որ սրանից ներունդ ունենայ։ Ընդ. հակառակն քրիստոնէութեան մէջ ճանաչուսամ է անձնատուրութեան յատկեհնական արժանիքն և ամենանութիւնն, ինչպէս և ամենանական բոլոր կենակցութիւնն ինքն ըստ ինքեան ունին կշիռ, առանց զաւակայ էլ։ Բայց այնու ամենայնիւ չէ կարելի ժխտել, որ ներկայումն էլ անզաւակութիւնը կարող է ախտալ զրկանք համարուել, որ հարկ է ասնել իբրև բաղդի հատաճ։ Ա յսպիսի գէպքում ծնողները չունին տեսանելի պտուղ սիրոյ կենդանի գրաւական, որպիսիք համարուսամ են ողորմաբար զաւակունք. նոքա չեն տեսնում իրանց կեանքի կրկնապատկումն նոր կեանքի մէջ, որ ամում է իրանց աչքի առաջ։ Նոքա զրկուսամ են իրանց կեանքի շարունակութիւնից երկրիս վերայ։ Ուստի և անզաւակ ամենայինները յաճախ պղծեգրուսամ են պրօվիդենսին և ընկճելիկ ներին և հոգում են նոյնս վերայ իբրև իրանց զաւակց վերայ։

Ամուլ ամենանութեանց մասին պատճ խորհրդածութեանց վերայ մենք կաւելացնենք հարց՝ թէ արդեօք կարելի՞ է հաստատել որ զաւակներ ունենալն երջանկութիւն է։ Շատերն այս հարցին պատասխանում են դրականապէս. նոքա միևնոյն իսկ աւելացնում են, որ որքան տան մէջ շատ են զաւակներ, այնքան աւելի մեծ է երջանկութիւնն։ Ա յս հայեցողքը յայտնի բան է կարող է իրան յենակէտ ունենալ հին ազգի հայեցուածքը, բայց միևնոյն ժամանակ քարձի թռոչի են անում այն հանգամանքն, որ այն յատկութիւնք, որոնք ունէին նշանակութիւն Խորայելի և Աստուծոյ նախապատրաստական անօրէնութեան համար, չէ կարելի վերաբերել աւանդ խորհրդո-

գաճուճեան և այլ ազգերին։ Եթէ զաւակների բազմութիւնն անապայման կերպով երջանկութիւն լինէր, աղքատ սինկլէրի ամուսնութիւնը անշուշտ կը լինէին ամենաերջանիկները։ Բայց երբ նայենք այդ ամուսնութեանց վերայ, իրանց բազմութիւ հիւանդոտ և քաղցած զաւակներով, որոնց ճնուղներն ոչ կերակրել կարողանում են և ոչ էլ դաստիարակել և որոնք աւելի և աւելի ստուարացնում են չքաւոր բնակչաց թիւը, կզգանք կարևորութիւն ստուգելու այդ երջանկութեան անպայման նշանակութիւնն։ Այս պէսքում երջանկութեան պայմանն է, որ անպատճառ լինի տուն, լինի ընտանեկան օճախ, ուր զաւակները կարողանային գտնել հնուն և ղեկաւ, ու դաստիարակուէին Տիրոջ ուսմամբ և խրատով։ Անպատճառ, քաղցած զաւակների բազմութիւնը դժուար է ամուսնութեան երջանկութիւն համարել։ Մինչև անդամ թէգուպ թոռ լինի ընտանեկան օճախ և բազմաթիւ զաւակների վոխարէն մէկը լինի, այնուամենայնիւ կատարեալ երջանկութիւնը կը լինի այն գերդաստանում ուր զաւակների դաստիարակութիւնը յայտոլ կերթայ, ուր զաւակները կը դաւանան բարի և Աստուծոյ ու մարդոյ հանգստական։ Այն հայեցուածքն, որով զաւակ ունենալը համարուում է անպայման երջանկութիւն, հիմնուած է կարելիութիւնն ու իրականութիւնը միևնոյն հետ խառնելու վերայ, սկիզբն ու ղարգացումն խառնելուն վերայ։ Իւրաքանչիւր սկսուող մարդկային կեանքի մէջ բոլանդակուում է երջանկութեան կարելիութիւնը։ Բայց որպէսզի այս կարելիութիւնը դառնայ երջանկութիւն, որպէսզի այս սկիզբն ղարգացման հասնի, և չը դառնայ անէծք ու որոմնութիւն—սորա համար անհրաժեշտ են շատ պայմաններ և այն ոչ միայն արտաքին պայմաններ, այլ և այնպիսիք, որոնք հիմնուած են ապագ կոֆէ գործողութեանց վերայ։ Ֆիխտա Բրիստոս ասում է. «Կին յորժամ ծնանիցի՝ որոմնութիւն է նմա. զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ» (Յովհ. ԺԶ. 21)։ Տիրոջ մատնացոյց եղած այս ուրախութիւնն, թէ մարդ ծնաւ յաշխարհ, ցոյց է տալիս ուրախութիւնը նոր սկսուող կեանքի համար անսահման կարելիութեամբ, որ նորա մէջ բո-

վանդակուսմէ—այս վառքն է «մարդուն», որին տեսնուսմէ մօր աչքն իւր զաւակի մէջ, վառք, որոյ համար նա կոչուած է. բայց որին դեռ և ս չէ հասած: Այսպէս այս ուրախութիւնը հասատուն ուրախութիւն չէ, նորա հիմքը շատ խախտուտ է, և վաղ թէ ուշ կարող է դառնալ տրտմութիւն: Երբ Եւան ծնաւ կայէնին, ուրախութիւնից նա զուարճանուսմէր, որովհետև յոյս էր տածուսմ, որ նա կը լինի օրհնութեան և ուխտի զաւակը, բայց կայէնը դարձաւ նորա համար վիշտ և տրտմութիւն: Երբ ծնաւ Դաւթի որդին՝ Աբիսողոմը, նոյնպէս ուրախութիւն էր տան մէջ, բայց ուրախութիւնը տրտմութիւն փոխուեցաւ, երբ Աբիսողոմն ապստամբութիւն բարձրացրեց հօր դէմ և Դաւթի տունը լցրեց ալմուկով ու խռովութեամբ: Երբ ծնաւ Յուդա Իսկարիովտացին, ուրախութիւն էր, որովհետև «մարդ ծնաւ յաշխարհ»: Բայց և այնպէս նա անիծիչ զաւակ էր և փրկիչը նորա մասին ասաց հետևեալ ծանր խօսքերը. «Լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն» (Մատթ. իզ. 24): Իսկական հիմնաւոր ուրախութիւնն այն մասին, թէ մարդ ծնաւ յաշխարհ, կը լինի նորա կեանքի բոլոր ընթացքի ուրախութիւնն, նորա բոլոր պատմութեան ուրախութիւնն, որ նա կատարել է երկրիս վերայ, այն է եթէ այդ կեանքը յիրաւի մասնակից է եղել վառքին, որ նշանակած է մարդուս համար. բայց այդպիսի ուրախութիւնը կարող է երևիլ մեծ վարձութիւններին և վտանգներին յաղթելից յետո, չը նայելով որ այդ կեանքն անցել էր մկրտութեան շնորհքի ներքոյ: Սորա վերայ է հիմնուած պայմանական, հոգեբարական կողմն այն ուրախութեան, որ բովանդակուսմէ մանկան ծննդեան մէջ. այս դէպքում ուրախութիւնը միշտ միացած պիտի լինի երկիւղի և սարսափի հետ: Որքան մեծ է զաւակների թիւն, այնքան մեծ է և պատասխանատուութիւնը:

Զաւակները պարգև են, որ երկնքից ուղիղ չէ ընկնուսմ, այլ նրան հայրն և մայրը պէտք է ձեռք բերեն սուեղծագործութեան աղբիւրից: Իսկ արտաքոյ ամուսնութեան ծնեալ զաւակները պարգև չեն, այլ յատկացուսթիւն այդ աղբիւրից. այս դէպքում Աստուծոյ պատկերն աշխարհ է բերուսմ հակառակ նորա կամքոյ թէև

այս սրգելք չէ լինում որ այստեղ էլ Աստուած մանուկներին հանդէպ իւր պատկեր և նմանութիւն։ Եթէ մենք զաւակներին համարում ենք պարգև, մենք չը պէտք է մոռանանք, որ այդ պարգևն իսկոյն և անմիջապէս դառնում է մեծ և ծանր խնդիր և ամեն նորածին մանկան հետ երևում է և նոր խնդիր։ Այս մասին հանգամանօրէն և խորին խորհրդածութեամբ մտածելու են նոքա, որոնք զաւակներ ունին և աւելիևս կարող են ունենալ, բայց բաւական չեն խորհում այն մասին, որ իրանց վերայ չափազանց բեռն են առնում, որոնք իրանց ուժերից բարձր են։ Այս մասին պէտք է մտածեն ու խորհեն և նոքա, որոնք չոգոյ են հանում որ իրանց ամուսնութիւնն անպտուղ է։ Ամուսնացած կինը զգում է խորին և բնական ցանկութիւն զաւակ ունենալու, բայց եթէ նորա ցանկութիւնը, նորա ջերմեռանդ ազօթքն անկատար են մնում, լաւ կը լինէր, որ այդպիսին ինքն իրան հեռևեալ հարցն անէր։ Մի՞թէ դու գիտես, որ պարգևն, որ դու սրտանց ցանկանում ես, կը լինի քեզ համար իսկապէս երջանկութիւն։ Հաւատա՞ ես, որ այն պարգևն, եթէ նա քեզ արուի, քո առաջը չի դնիլ այնպիսի խնդիր, որոյ անյաջող լուծումն կը գցի քեզ և՛ս աւելի խորին տրտմութեան մէջ։

(Կը շարունակուի)։

ԽՈՐԵՆԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ [1]

Գ.

ՄԱՐԱԲԱՍԻ ԾԱԻԱԼԸ.

(Շարունակութիւն)։

Ա. գիրք, գլուխ 10։ Այս գլուխը նուիրուած է Հայկի ապստամբութեանը և նմանապէս ամբողջութեամբ Մարաբասիցն է։ Միայն տեղ տեղ Խորենացին աւելացնում է. «Այս արդարացուցանէ զանդիր հին ասացեալ զրոյցս»,—«Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անդիրս»։ Այս յաւելուածներից մենք իրաւունք ունինք հետևցնելու, որ Խորենացու նկարագրութիւնները որչափ Մարաբասի, նո՛յնչափ, և թերևս՝ աւելի էլ զրոյցների հետևութեամբ են գրուած, որով և մեկնուում են Խորենացու պատմածի վիպական կերպարանքը, յատուկ անունների ժողովրդական ստուգաբանութիւնները, տեղագրական ծանօթութիւնները, վառվռուն բանաստեղծական լեզուն, որոնք մեծ մասամբ կարող էին Մարաբասում չգտնուել։

Այս մասին Պատկանեանը բոլորովին հակառակ կարծիքի է, նրա ենթադրութեամբ Խորենացու ունեցած Մարաբասեան մատեանը անհամեմատ աւելի ընդարձակ էր, որից Համառօտեց Խորենացին իւր ջոր ու ցամաք ոճովը 2)։ Մինչդեռ մեր կարծիքով Խորենացին «ժամանակագրի»—Մարաբասի համառօտ հատուածը երկրորդելով, քիչ թէ շատ ենթարկուում է իրեն ծանօթ վիպական երգերի և զրոյցների ազդեցութեանը։ Այնպէս որ Խորենացու լեզուն և պատմածը անհամեմատ պէտք է մերձաւոր լինին վիպականին, քան Մարաբասինը։

Ա. գիրք, գլ. 11։ Այս գլխում նկարագրուում է Հայկի պատերազմը և Բէլի մահը, ամբողջապէս առնուած Մարաբասից։ Նախընթաց գլխի համար մեր արած նկատողութիւնները վերաբերում են և այս գլխին։ Կարող են պատահել և յատուկ անուններ, որ առնուած են տեղական զրոյցից և հիւսուած պատմութեան մէջ, բայց որոնք չը կային Մարաբասում։ Օրինակի համար՝ Հայոց Ձոր և Գերեզմանք կամ Գերեզմանակք անունները երևում է որ չը կային Մարաբասում։—«Այսորիկ աղագաւ, աւելացնում է Խորենացին, և դաւառն այ ժ մ անուանի Հայոց Ձոր։ Իսկ բլուրն, ուր քաջամարտեցաւն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ գերեզմանս,

---

[1]) Տե՛ս «Արարատ» մայիս։

[2]) Ванскія Надписи, եր. 71, ծնթ. 4, եր. 77 եւայլն։

որ այժմ ասի Գերեզմանք (կամ Գերեզմանակք»)։ Իսկ ակներև է՝ որ Հարք յատուկ անունը կար և Մարաբասի մէջ, որովհետև ասում է Խորենացին՝ «բայց զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք, ասէ (Մարաբաս)՝ հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց»։ Այս փոքրիկ նկատողութեանց վրայ խնդրում ենք առանձին ուշադրութիւն գարձնել, որովհետև դրանք մեզ հարկաւորելու են վերջում։

Ա. գիրք, գլ. 12։ Այս գլուխն սկսւում է այսպէս. «Բազում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին, այլ մեք՝ որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է շարեսցուք»։ Այս միակ կէտն է, ուր Խորենացին համառօտել է Մարաբասին, կրճատելով այն, ինչ որ իւր հաւաքածոյին պիտոյական չէ եղել։ Այս մեծ գլխում, առնելով Մարաբասից, Խորենացին պատմում է Հայկի «ծնունդները,—սերնդեան մասին, անշուշտ իւր կողմից անելով պատմական և տեղագրական յաւելուածներ։ Օրինակի համար այս յաւելուածը. «Եւ ի սոցանէ ասէն (ո՛չ Մարաբաս) լեալ գնահապետութիւնս Մանաւազեան և զԲզնունեաց, և Արգունին անուանեալ՝ որք աստ ուրեմն (=յետոյ ուրեմն) յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին (ո՛չ Մարաբաս) ի միմեանց պատերազմաւ։ Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ զշէնս իւր. և ի նմանէ ձգեալ ասի (ո՛չ Մարաբաս) մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց, որք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեզ են այժմ երևելիք»։ Կամ Շարայի մասին աստուածը. «Վասն որոյ արդարանալ Թուի առաստպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. Թէ քո Շարայի որկորն է, ասէն, մեր Շիրակայ ամբարքն չեն»։ Կամ այս՝ «այլ Պարթք յստակագոյն իսկ Սիսական կոչեն»։ Եւ կամ այս՝ «ի սորա ծննդոց աստ ուրեմն (=ապա ուրեմն) Վաղարշակ, որ առաջին ի Պարթևաց արքայ Հայոց, գտեալ արս անուանիս, տեարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ, և զայս առնէ Վաղարշակ ի պատմութենէն ստուգեալ։ Այլ այս թէ արդեօք է, յիւրում ժամու պատմեսցուք»։ Ես այս մասին խօսում է Խորենացին Բ. գիրքը, 8 գլուխում, որից և պարզ երևում է, որ այս «պատմութիւն» կոչուածը Մարաբասինը չէ, որովհետև Բ. գիրք 7 և 8 գլուխներում ոչ միայն չը կայ Մարաբասի անունը, այլ և նրա մասին որ և է ակնարկութիւն։ Եթէ կար մի պատմութիւն, որ պարունակում էր յատկապէս Սիսակեան ազգի տոհմական աւանդութիւնները, այդ պատմութիւնը պէտք է լինէր աներկբայաբար այն զրուցաց մատեաններից մէկը, նախարարական տների վերաբերութեամբ, որոնց գոյութեան վկայում է Խորենացին Ա. 3. «Այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեանն է պայազատութիւն»։ Պ. Մառն իրաւամբ նկատում է, որ

այս տեղում սեպհական բառը չը պէտք է հասկանալ իբր արդի սովորական նշանակութեամբ, այլ վաղնջական՝ իբրև սեպուհական [1]։ Այդ գրուցաբանական գրքերը պարունակում էին նախարարական տների ազգագրութիւնները [2]։ Սեպհական բառի այդպիսի վաղնջական առմամբ կիրառութեան հանդիպում ենք Խորենացու մէջ և այլ տեղում՝ «Եւ զերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ (Մեծն Ներսէս)։ Մի՝ զմերձաւորաց [3] իւնամութիւն, զոր վասն ագահելոյ սեպհական ազատութեանն առնէին, և զմիսն՝ որ ի վերայ մեռելոցն գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն» (Գ. 20)։ Այս մտքով պէտք է հասկանալ և Սեպհական գունդը, իբրև սեպուհական կամ սեպուհներից կազմուած գունդ, որի մասին ուրիշ անգամ թերևս առիթ ունենանք խօսելու։

Աներկբայելի է սակայն, որ այս 12-դ գլուխը ընդհանրապէս Մարաբասից է քաղուած, բայց Խորենացին, իբրև ընիկ հայ և հայկական աւանդութեանց նաև Հայաստանի տեղագրութեան իբրև լաւ ծանօթ՝ ընդլայնել է Մարաբասեան ժամանակագրութիւնը, առնելով տեղական զրոյցներից և նախարարական պատմութիւններից բազմաթիւ տեղեկութիւններ և անելով բազմաթիւ յաւելուածներ։ Թէև աներկբայելի է և այն, որ Հայկայ ամբողջ սերունդը ուղիղ գծով մինչև Արայ գտնուում էր Մարաբասի մէջ, իսկ թէ երկրորդական ճիւղերից որո՞նք էին գտնուում Մարաբասեան պատմութեան մէջ և որոնք ո՛չ—դժուարին է որոշելը։ Այսպիսով, կրկնում ենք, շատ յատուկ անուններ, որ կան Խորենացու այս՝ Մարբիբասից քաղած գլուխներում, կարող էին չը լինել բուն Մարաբասի մէջ և միմիայն ըստ տեղւոյն յաւելուած են Խորենացուց։ Այսպէս է, օրինակ, Վարաժնունեաց տան ծագման պատմութիւնը։

Այս գլխի վերջում Խորենացին նորից կրկնում է Հայկայ ծննդաբանական ցանկը, իբրև ապացոյց որ իւր պատմածի հիմնական գծերը առնուած են Մարաբասից. «Այս Հայկ, որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, նախնի Հայաստանեայց, և այս ազգք նորա և ծնունդք և աշխարհ բնակութեան, և յայսմհետէ սկսան, ասէ (Մարաբաս), բազմանալ և լնուլ զերկիրն»։ Սրանից յետոյ յիշում է Խորենացին Հարմայիին և Արամին, անշուշտ առնելով Մարաբասից, և իւր կողմից աւելացնում է թէ Հայերը Յոյներից Արմէն են կոչւում Արամի անունով և Պարս ու Ասորիներից՝ Արմենիք։ Բայց Արամի քաղաքործու-

---

[1]) Записки Восточн. отдѣл. имп., русск. археолог. общ. томъ V, стр. 285—289.

[2]) «Պատմութիւն» եւ «գրուցաբանութիւն» բառերը մէկը միւսի փոխանակ գործ է դնում Խորենացին մի քանի անգամ (Ա. գլ. 8, 9 եւայլն)։

թեանց մանրամասնութիւնները տատամսում է գրի անցնել։

Ա. գիրք, գլ. 13 և 14. Սահակ Բագրատունու յատուկ խնդրանաց զիջանելով Խորենացին ստիպւում է այս երկու գլխում Արամի քաջագործութեանց մանրամասնութիւնները գրել։ «Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիրն... որպէս ցուցանէ նոյն ինքն պատմագիրն» ասացուածները, պարզ է, որ վերաբերում են Մարաբասին։ Այս գլուխների մէջ կան և Խորենացու՝ իւր յաւելուածներն ու ընդմիջարկութիւնները, ինչպէս օրինակ՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերի վերաբերութեամբ։ Բայց մեզ համար աւելի ուշագրութեան արժանի է 14-դ գլխի վերջում Խորենացու մի բոլորովին անսպասելի յայտարարութիւնը, որով ծանուցանում է, որ Արամի այս քաջագործութեանց մանրամասնութիւնները չը կայի գրուած «Թագաւորաց և սեհենների բուն մատեաններում», այլ Մարաբասի վկայութեամբ՝ ժողովուած էին դրանք «փոքր և աննշան մարդկանց դուսանական երգերից։ — Բայց թէ ընդդէր այսքիկ ի բուն մատեանս թագաւորացն կամ սեհենից ոչ յիշատակեցան, մի՛ ոք ընդ այս երկբայացեալ տարակուսեսցի։ — Բայց թէպետ և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպէս Մար Արաս Կատինայ պատմէ, ի փոքունց ոմանց և յաննշանից արանց ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց»։ Այս մութը խօսքերից մենք կարող ենք հետևեցնել գոնէ այսչափը, որ այն իրրև թէ Աղեքսանդրի հրամանով քաղդէարէնից յունարէն թարգմանուած մատեանում չը կար Արամի այս քաջագործութիւնների պատմութիւնը։ Հետևաբար այդ չը կար և Մծբինի արձանների վրայ դրոշմուած հատուածներում, որ քաղուած էին Աղեքսանդրի թարգմանել տուած մատեանից։ Ուրեմն և Խորենացու ունեցած Մարաբասում, որ այս արձանագրութեանց պատճէնն էր, Արամի անունը կար, բայց նրա քաջագործութեանց մանրամասնութիւնները թերևս չկային, կամ պատմուած էին միայեւլուած հատուածում, բայց ոչ բնագրում։ Այսպիսի միայեւլուած հատուած էր անշուշտ և Պարթևական տերութեան սկզբնաւորութեան պատմութիւնը, որ լինելու էր Մարաբասի գրքում, ինչպէս այդ տեսանք մենք 8-դ գլխին ուսում նասիրելիս։

Ա. գիրք գլ. 15։ Այս գլուխն ամբողջապէս նուիրուած է Արայի և Շամիրամի պատերազմին։ Ոչ մի տպաւիր չէ յիշուած, այնպէս որ դժուար է որոշել, արդեօք Մարաբասից է առնուած, թէ վիպասանական երգերից։ Նկարագրութիւնն ամբողջովին վիպական է. Շամիրամը սիրահարուած է Արային, առանց սրան տեսնելու, միմիայն Արայի մասին երգուած դովեստների լսելով։ — «Ի բանն, որ զնմանէ, (զԱրայէ), որպէս ի տեսութիւն

շամիուԹեամբ վառեալ էր»։ Պէտք է նկատել, որ այս տեսակ, առանց տեսնելու, այլ միայն գովասանական գուսանական երգեր լսելով սիրահարուիլը յատուկ է բուն ժողովրդական վէպին։ Այսպէս է սիրահարուում օրինակի համար, Դաւիթը ԽանդուԹ խաթունին 2)։ Ուստի և մենք կատարեալ իրաւունք ունինք հետևցնելու, որ այս գլուխը գրուած է վիպական երգի հիման վրայ, թեև միւս կողմից դիտենք արդէն, որ Արայի անունը կար Մարաբասի ցանկում։ Մարաբասին ծանօթ էր և Արայի ու Շամիրամի պատերազմը, ճիշտ այն իմաստով, ինչպէս այդ պատմուում էր հայկական վէպում, թեև հայկական վէպը, մասնաւորապէս այս կէտում, անհամեմատ ընդարձակ էր, քան Մարաբասի պատմուԹիւնը, ինչպէս այդ կը տեսնենք հետագայ 18-դ գլխում։

Ե. գիրք, գլ. 16։ Այս գլուխը նշանաւոր է մեր այս հետազօտուԹեան համար։ Ահա առաջին անգամ մի ամբողջ գլուխ, որ ոչինչ առնչուԹիւն

---

1) Այս կէտում գրեԹէ բոլոր Թարգմանիչները չեն հասկանում «քանք» բառի յատուկ նշանակուԹիւնը, որ է երգ։ Խորենացին անխտիր գործ է դնում «քանք կամ քան», «քանք երգոց» կամ «երգ քանից» ասացուածները երգի մտքով։ Այս մասին առիԹ կունենանք առանձինն խօսելու։ Սակայն պէտք է աւելացնել, որ Էմինը 1881-ին ընդունեց «քանք»-ի ուղիղ նշանակուԹիւնը իբրեւ երգի, ընկնելով ուրիշ սխալի մէջ։ Շամիրամը, երբ որ լսում էր Արայի մասին երգուած գովքերը (երգ—քանք), այնչափ բորբոքուում էր սիրով, որ կարծես Թէ Արային աչքո տեսնելիս լինէր։ Երեւի երգն էլ վարպետուԹեամբ էր նկարագրում Արային։ Սակայն Էմինն այնպէս է հասկացել, իբրեւ Թէ երգը, ոչ Թէ Արայի, այլ Շամիրամի մասին լինէր երգելիս։ «Въ страстномъ своемъ безуміи она, какъ поется о ней въ Пѣснѣ, горѣла къ нему желаніемъ, живо представляя его себѣ. (Моисей Хор. и Древ. Эпосъ Арм.» եր. 52)։

2) (Գուսանները) ԽանդուԹ խաԹունն ԴաւԹի համար դեռևսկին.

«Թ'էնուր սիակուԹեն կը խարցնես,
Քանց գարնան ձիւն սլտակ է, լաւ, սլտակ է.

«Թ'էնուր կակղուԹեն կը խարցնես,
Քանց բամբակ կակուղ է, լաւ, կակուղ է.

«Թ'էնուր ընկներ կը խարցնես,
Ղալամով քաշիր ին, լաւ, քաշիր ին.

«Թ'էնուր աչքեր կը խարցնես,
Ջէնու կԹխէներ, լաւ, չէնու կԹխէներ.

«Թ'էնուր ճակտի լէնուԹ կը խարցնես,
ԵօԹ անկիւրէ, տեղ մէկ յաւել է, լաւ, տեղ մէկ յաւել է»։

(«ԴաւԹ եւ Մհեր», եր. 37)։

Սակայն Շամիրամի եւ Արայի պատմուԹեան մէջ դերերը փոփոխուած են. սիրահարուողը «այրասիրտ» Շամիրամն է, իսկ գովքը շինուած է «գեղեցիկ» Արայի վրայ։

չունի Մարաբասի հետ։ Այս գլխի բովանդակութիւնն է Վան քաղաքի շինութիւնը, առանց քաղաքի անուան յիշատակութեան, վերին աստիճանի ճիշդ և հետաքրքրական տեղեկութիւններով։ Այս գլուխն ենք նաև առաջին անգամ հանդիպում լեռնագիր արձանագրութեանց յիշատակութեան։ Այս բոլորը Խորենացին, ինչպէս ինքը բազմիցս կրկնում է, ՆԸ կարգել է ի լրոյ։ Մինչև անգամ ինքն անձամբ չէ տեսել Վանը, այդ երևում է նրա հետևեալ վկայութիւններից. «որպէս ասեն», «որպէս լսեմք», «ոչ ի լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յումեքէ», «որպէս լուաք»։ Շուլցի, Փորէոի նկարագրութիւնները կէտ առ կէտ համաձայն են դուրս գալիս Խորենացուն, չը նայելով որ այս ճանապարհորդները մեր դարուն են պատկել Վանին, այն է՝ Խորենացուց տասն և չորս դար յետոյ։ Ահա մի փառաւոր ապացոյց Խորենացու ճշգրտութեանը։ Լանգլուան այս գլուխն էլ արտատպել է իւր Ա հատորում իբրև Մարաբասեան պատմութիւն (?!)։ Խորենացով զբաղուող բոլոր բանասէրներն էլ, որչափ մեզ յայտնի է, այս կարծիքին են եղել, համարելով Խորենացու Ա. գիրքը, 8 գլխից մինչև Բ. գիրքը 9 գլխի վերջը ամբողջապէս առնուած Մարաբասից։ Առաջին անգամ Գարագաշեանն է, որ այս գլուխը դուրս է հանում իբրև ոչ Մարաբասից առնուած։

Ա. գիրք, գլ. 17։ Այս գլխում պատմում է թէ ինչպէս Շամիրամ կոտորեց իւր որդիներին, նրա յարաբերութիւնը Զրադաշտ Մոգի հետ, վերջինիս ապստամբութիւնը և վերջապէս՝ Շամիրամի մահը իւր Նինուսաս որդուց։ Ոչ մի աղբիւր չէ յիշում Խորենացին այս գլխում։ Նախընթաց գլուխն էլ տեսանք որ Մարաբասից չէր։ Միւս կողմից՝ Հայկի և նրա յաջորդների պատմութեան մէջ տեսանք, որ գրեթէ ի բաքանչիւր պարբերութեան վերջը կամ սկիզբը յիշում է Մարաբասը՝ «ասէ», «ասէ նոյն պատմագիր», «որպէս ասէ նոյն պատմագիր» խօսքերով, իսկ այստեղ և ոչ մի յիշատակութիւն։ Ուստի և մենք մեզ իրաւունք ենք համարում եզրակացնել, որ Շամիրամի պատմութեան այն մասերը, որ վերաբերում էին Շամիրամի որդիների կոտորածին, Զրադաշտ մոգին, Հայաստան ամառանոց գալուն, վերջապէս Շամիրամայ մահուանը, ինչպէս նաև Վան քաղաքի շինութեանը, չը կային Մարաբասի մէջ։ Այս մեր կարծիքը աւելի ևս հաստատում է և հետագայ գլխի ուսումնասիրութեամբ։

Ա. գիրք, գլ. 18։ Այս փոքրիկ գլուխը շատ կարևոր է Մարաբասի ծաւալը ճշդելու համար, ուստի և դնում ենք in extenso։ «Ունիմ ի մտի և « զկնփաղիոնին, վասն ոչ տալ ըմեզ բազմաց ծաղրել. զի ասէ ի բանից « այլոց նախ յաղագս ծննդեան Շամիրամայ, և ապա ուրեմն զպատե« րազմն Հնդկաց։ Այլ հաւաստի մեզ թուեցաւ, որ ի Մար Աբայն « Կատինայէ քննութիւն քաղդէական մատենից քան զայսոսիկ. քանզի

« ոճով իմն ասէ, և զպատճառս պատերազմին յայտնէ։ Իսկ « առ այսոքիւք՝ և աշխարհիս մերոյ առասպելք զբազմահմուտ Ասորին « արդարացուցանեն. աստ ուրեմն զմիհն ասել (=ասեն) Ջամիրամայ, « և զհետևակ փախուստն, և զպաքումն և զիղձս ջրոյն և զարբուման, « այլ և ի մօտ հասանել սուսերաւորաց, և զյուդուխան ի ծով, և բան « ի նմանէ՝ Ուլունք Ջամիրամայ ի ծով։ Այլ թէ ախորժես առասպել, և « Ջամիրամ քար առաջին քան զՆինուէ։ Արդ այս շատ է. բայց մեք որ « ինչ զկնի այսորիկ»։

Խորենացին ասումէ. Թո՛ղ չը ծաղրեն մեզ, իբրև թէ մենք անտեղեակ լինէինք Կեփալիոնի պատմածին Ջամիրամի վերաբերութեամբ։ Կեփալիոնը Ջամիրամի ծնունդն է պատմում առաջ և յետոյ նրա պատերազմը Հնդկաստանում, մինչդեռ Մարաբասը Ջամիրամի ծննդեան մասին ոչինչ չէ ասում և Ջամիրամի պատերազմը կատարուած է համարում ոչ թէ Հընդկաստանում, այլ Հայաստանում՝ Արայի հետ։ Մարաբասի քաղդէական մատեանից առած տեղեկութիւնը մեզ աւելի հաւաստի թուեցաւ, ասում է Խորենացին, որովհետև աւելի տեղովն (ոճով) է դրուած և պատերազմի պատճառն էլ յայտնուում է, այն է՝ (աւելացնում ենք մենք), Ջամիրամի սէրը և Արայի մերժումը։ Մանաւանդ որ մեր աշխարհի առասպելներն էլ բազմահմուտ ասորուն արդարացնում են,—նմանապէս պատմելով Ջամիրամի պատերազմը՝ Արայի հետ և Հայաստանում։—Թեև մեր առասպելները աւելին էլ են ասում՝—Աստ ուրեմն՝ զմիհն ասել Ջամիրամայ, և զհետևակ փախուստն, և զպաքումն և զիղձս ջրոյն, և զարբուման, այլ և ի մօտ հասանել սուսերաւորաց, և զյուդուխան ի ծով և բան ի նմանէ՝ Ուլունք Ջամիրամայ ի ծով այլ և Ջամիրամ՝ քար»։ Ակներև է մեզ համար, որ Ջամիրամի մահը իւր պարագաներով (որդիների կոտորած, Զրագաշտի ապստամբութիւն և այլն), նրա ոտքով փախուստը, ծարաւելը, պապակելը, ջուր գտնելն ու խմելը, սուսերաւորների մօտ հասնելը, յուդուխների ծովն ընկնելը կամ ծովը ձգելը, Ջամիրամի երգը [1]) և նրա քար կտրիլը ամբողջովին վիպական երգերից են ըստ

---

[1]) Այս կէտը՝ «բան ի նմանէ», այսինքն է Շամիրամից երգուած երգը, որ սկսուում էր Ուլունք Շամիրամայ ի ծով բառերով։ Ս. Մատթէոսեան իւր թարգմանութեան մէջ անյաջող կերպով է որոգայթում՝ «բանը» թարգմանելով խօսք։ Աշխարհաբար թարգմանութեան 101-դ ծանոթութեան պատճառաբանութիւնը չէ արդարացնում այս սխալը։ Մեռնելուց առաջ, կամ մինչեւ իսկ մեռնելուց յետոյ, դիւցազնի երգը, որի մէջ ողբացուում է անցեալ զօրութիւնն ու փառքը շատ սովորական է ժողովրդական վիպում։ Շամիրամն իւր վերջին երգում անշուշտ ողբում էր իւր անցեալ զօրութիւնն ու փառքը, որ կապուած էին նրա իւր յուլունքների—յուդուխների հետ, ծովը ձգուելին այդ յուլունքները եւ նրա փառքն ու զօրութիւնը կորան անդառնալի։ Շամիրամի այս

Խորենացու վկայութեան, և ոչ Մարաբասից։ Մինչդեռ Արայի և Շամիրամի պատերազմին վկայում էին թէ այն վիպական երգերը և թէ Մարաբասը։ Իսկ Կեփալիոնի ասած Շամիրամի հնդկական պատերազմը այս տեղեկութեանց հետ հաշտեցնելու համար, Խորենացին Արայի պատերազմից յետոյ է համարում կատարուած Շամիրամի պատերազմը Հընդկաստանում և ապա թէ Շամիրամի մահը Հայաստանում։ «Յաղագս թէ հաւաստի նախ լեալ պատերազմն Շամիրամայ ի Հնդիկս, և զկնի՝ (յաղագս) մահուան նորա ի Հայս»։ (վերտառութիւն այս 18-դ գլխի)։

Ա. գիրք, գլ. 19։ Այս գլխում Խորենացին նախ քան իւր պատմութեան թելը շարունակելը նոր աղբիւրներ է ցոյց տալիս, առանց բնաւ յիշելու Մարաբասին։ Այս նոր աղբիւրները լինելու են՝ ա) գրքեր, բ) իմաստուն և տեղեակ մարդկանց հաղորդածները. «Յարմարեալ զամենայն կարգեցից քեզ ի գիրս յայսոսիկ զազգիս մերոյ զաւագագոյն զարս և զնախնիս... որ ինչ ի գրոց իսկ, ըստ նմանեաց ապա՝ և որ ինչ ի բանից արանց իմաստնոց և յայսոսիկ քաջախոհակաց, յորոց մ՚ևք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս»։ Եւ որովհետև Խորենացին արդէն մի քանի անգամ աղդարարել է մեզ, որ ինքը նախապատուաթիւն է տալու յունական գրքերին (Ա. 1, 2, և այլն), ուստի մենք ճշմարտութիւնից հեռացած չենք լինի, եթէ յունական համարենք Խորենացուն իրրև աղբիւր ծառայող այս գրքերը։ Քիչ յետոյ, գոնէ, այդպիսի մի գրքի յիշատակութեան հանդիպելու ենք։ Միւս կողմից՝ «ի գրոց իսկ և ի բանից արանց իմաստնոց» ասացուածքը զանազան ձևերով կրկնուում է Խորենացու պատմութեան մէջ, միշտ ենթադրելով յունական աղբիւրներ։ Օրինակի համար՝ մեզ արդէն ծանօթ ասացուածքը Ե. գիրք, 75 գլխում, ուր բառ առ բառ նոյն նախադասութիւնը գործ է դրուած յունական աղբիւրների համար. «Ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մատենիցն Յունաց իսկ, ըստ նմանեացն ապա՝ և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և. հնախօս սիրարանից ստուգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զրուցեցաք»։ Ամենևին տարօրինակ բան չէ, եթէ յար և նման մտքերը արտայայտում են նման բառերով, թէև նոյն գրքի զանազան մասերում։

երգը, մեր կարծիքով կարելի էր համեմատել Գաւթի եւ Թանդուխի խաչունի վերեզմանից եկած վերջին ձայնին՝ «Որդի, վ՚ինչս անեմ—Գացիր մէջալն ի ձեռնէս,—Գացիր մէջալն ի ձեռնէս,—Թափիր մազերն երեսէս»։ կամ թէ՝ «Որդի, վ՚ինչս անեմ—Գացիր դաւրանը ձեռնէս,—Գացիր դաւրանը ձեռնէս,—Թափիր մազերն ի գլխէս»։

«Գաւթի եւ Մհերս», եր. 53—54։

Խորենացին՝ այս գլխում այսպիսի ընդհանուր և անորոշ աղբիւրներ ցոյց տալուց յետոյ աւելացնում է. մենք աշխատեցինք ճշմարտաբան լինել ըստ մեր սովորութեան, բայց թէ որչափ ճշմարտաբան են այն աղբիւրները, որոնցից մենք հաւաքեցինք մեր գրածը, այդ Աստուածն է միայն յայտնի, և մարդիկ կարող են գովել կամ պարսաւել այդ աղբիւրները, մենք պատասխանատու չենք, մենք հեռու ենք եղել այդ աղբիւրներից և բացակացեալ.—«Եւ ասեմք լինել արդարաբան ի պատմութեան յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան. իսկ ըստ որոց հաւաքումն, Աստուծոյ լինել յայտնիս և մարդկան գովելիս կամ բասրելիս, և մեք այնոցիկ օտար և բացակացեալ» (1): Այսպէս կամ այնպէս, շարունակում է Խորենացին, կամ բոլորովին հաւաստի կամ ճշմարտութիւնից փոքըր ինչ շեղուած, սկսեմ քեզ պատմել: Եւ դնում է հայ նահապետների մի ահագին ցանկ՝ Անուշաւանից մինչև Սկայորդի: Ասելն անգամ մեզ աւելորդ է թւում, որ այս գլխում Մարաբասից ոչինչ չկայ: *Ութերմն և Մարաբասն ընդհատուում է իսկապէս Արայի և Շամիրամի պատմութեան վրայ*, ինչպէս և գուշակւում էր արդէն սկզբից: Եթէ Մարաբասի մէջ կային էլի մի քանի տեղեկութիւններ, և Խորենացին օգտուել է այդ տեղեկութիւններից էլ, նա իւրաքանչիւր անգամ այդպիսի մի փոխառութիւն անելիս յիշելու է, և իսկապէս էլ յիշում է Մարաբասին կամ «պատմագրին»:

(Շարունակելի) ՄԻՒԲԻՒՆ.

---

1) Այս պարբերութեան միտքը ոչ մի թարգմանիչ պարզ չէ ըմբռնել, ուստի եւ գլխաւորվին յեղաշրջուել է: Բացառութիւն է կազմում պ. Գարագաշեանի թարգմանածը. «Ես ճշմարտութեամբ եւ ուղղամտութեամբ կը պատմեմ զայսոսիկ. բայց ե՞ն ճշմարտախօս նաեւ այնք, յորոց հաւաքեցի՝ այն Աստուծոյ միայն է գիտելի. քանզի մեք օտար եւ հեռի եմք ի նոցանէ ժամանակաւ» (եր. 113): Մեր խօսքն, անշուշտ, ընդհանուր մտքին է վերաբերում եւ ոչ բառացի թարգմանութեանը: Չամեմատելու համար դնենք եւ Հ. Ստեփանէի թարգմանութիւնը, որ թէեւ բառացի, բայց գլխովին յեղաշրջուած է. «Ես ասում եմ, որ այս պատմութեան մէջ մենք ճշմարտախօս ենք, մեր յօժարութեան եւ ուղղամտութեան համեմատ. եւ այս կերպով հաւաքելս Աստուծոյն յայտնի է. իսկ թէ գովելի կը լինի թէ պարսաւելի մարդկանց մէջ, մենք օտար եւ հեռու ենք այդ երկուսից էլ» (երես 53):

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Անուանիք Նուիրատուաց, և քանակութիւնք նպաստից նոցա գրեալ ի 19· Յուլիս 1889 Թիւ Շրջաբերականի Բ· Արժ· Խաչ· Խաչատուր վարդապետի Կարապետեան փոխ—առաջնորդի Ամենափրկչեան սրբոյ վանաց, որ աստ ի Զուղա, յանուն վերանորոգութեան Մայր Տաճարի սրբոյ Էջմիածնի:

Ի Նոր Զուղա, յԱմենասուրբ վանս 1891, ի 12 փետրուար:

Ա Ն Ո Ի Ա Ն Ք

Առաջնորդ Խաչ· Խաչատուր վարդապետ 150 ղրան, Խաչ· տէր Մարտիրոս աւագ քհնյ· տէր Յովակիմեան 10 ղրան, տէր Գաւիթ քհնյ· Ս· Նահապետեան 10 ղրան, տէր Պօղոս քհնյ· Գրիգորեան 10 ղրան, Խաչ· տէր Սեղբեստրոս քհնյ· Յովհաննեսեան 10 ղրան, Խաչ· տէր Մինաս քհնյ· Բարսեղեան 3 ղրան, Յարութիւն Հայրապետ Պետեան 500 ղրան, տէր Իսահակ քհնյ· Թ· Ամիրչեան 10 ղրան, տէր Ռէթէոս քհնյ· Գաւթեան 3 ղրան, Աւագ սարկաւագ Սարգիս Ամիրչեան 10 ղրան, ոմն անանկ 2 ղրան, Աւետիք Յ· Բարսեղեան 2 ղրան, Մկրտում Յ· Աբգարեան 2 ղրան, Յառաջք Ամենափրկչին սրբոյ վանաց 7 ղրան, Աւետում տէր Պապակ Հ· Յակոբջանեան 2 ղրան, Մարիամ տէր Ներսեսեան 1 ղրան, Կարապետ տէր Յ· Գալստանեան 10 ղրան, Մարտիրոս Խ· տէր Մարտիրոսեան 5 ղրան, Գէորգ Խ· Մանուկեան 3 ղրան, Եղիա Յովսէփեան 3 ղրան, Կարապետ Թարվէրդեան 4 ղրան, Մկրտիչ Յ· Հայրապետեան 2 ղրան, Սահիանոս Գ· Աբրահամեան 1 ղրան, Յովսէփ Մ· Աբրահամեան 2 ղրան, Վէլիչան Մանուկեան 2 ղրան, Սարգիս Յովհաննեսեան 4 ղրան, Գրիգոր Յ· Ամիրեան 10 ղրան, Յովսէփ Հ· Գրիգորեան 3 ղրան, Յովսէփ Գ· Յարութիւնեան 3 ղրան, Յովսէփ Կարապետ Յակովբեան 2 ղրան, Աստուածատուր Սարգսեան 2 ղրան, Յարութիւն Մարտիրոսեան 1 ղրան, Մինաս Յովսէփեան 2 ղրան, Մարտիրոս Ս· Սահիանոսեան 6 ղրան, Սէթաղայ Մկրտումեան 1 ղրան, Խաչիկ Մարտիրոսեան 2 ղրան, Սահիանոս տէր Համայեակեան 2 ղրան, Գէորգ Յարութիւնեան 1 ղրան, Բաղդասար Յ· Աբգարեան 3 ղրան, Մինաս Յ· Յովսէփեան 2 ղրան, Սամուէլ Նալբէնդեան 1 ղրան, Սիմէոն Վարդանեան 1 ղրան, Յովսէփ Վարդանեան 1 ղրան, Գէորգ Անտոնեան 2 ղրան, Բարսեղ Յովսէփեան 2 ղրան, Սիմէոն

Աւետեան 1 ղուան, Հռիփսիմէ Մկրտչեան 10 շահի, Մատթէոս Գովլաթեան 1 ղուան, Մարիամ Գէորգեան 1 ղուան, Մատթէոս Յատուրեան 1 ղուան, Ստեփաննոս Մինասեան 1 ղուան և 10 շահի, Համիր Ստեփաննոսեան 1 ղուան, Պ. Թումիկեան 10 շահի, Մ. տէր Յ. Բաշխումեան 1 ղուան, Խաչխաթուն Կարապետեան 1 ղուան, Խաչիկ Յարութիւնեան 1 ղուան, Նուրար Մանուկեան 10 շահի, Աւետիք Յարութիւնեան 3 ղուան, Մ. Յ. Վարդանեան 3 ղուան, Անդրէաս տէր Եփրեմեան 2 ղուան, Յաննայի Աբրահամեան 2 ղուան, Շաֆէրի Ասատուրեան 1 ղուան, Յաննայի Ստեփաննոսեան 2 ղուան, Սարգիս Մ. տէր Սիմոնեան 10 ղուան, Մ. Ծ. Մարտիրոսեան 3 ղուան, տէր Կարապետ քհնյ. տէր Աբրահամեան 3 ղուան, Կ. տէր Մեսրովբ Պաւլեան 3 ղուան, Մէլքում Մարգարեան 3 ղուան, Յովհաննէս Կարապետեան 2 ղուան, Մկրտիչ Պ. Պաւլեան 3 ղուան, Մինաս Մ. Զօրաբեանց 2 ղուան, Նանաջան Մ. Սարգսեան 4 ղուան, Մ. Յ. Զօրաբեան 3 ղուան, Վարթուհ Յ. Թ. տէր Յովհաննան 5 ղուան, Մարիամ Մ. Յարութիւնեան 2 ղուան, Ալուղլու Յ. Յ. տէր Դուկասեան 1 ղուան, Աւետիք Մարգարեան 2 ղուան, Մարիամ Մինասեան 1 ղուան, Թագուհի Մ. Մ. Թորոսեան 1 ղուան, Յակովբ Յովսեփեան 5 ղուան, Խաչիկ Թադէոսեան 2 ղուան, Կարապետ տէր Կիրեղեան 3 ղուան, Խաչիկ Յակովբեան 2 ղուան, Միաբանութիւն կուսանաց սրբոյ Կաթարինէ անապատին 30 ղուան, Թագուհի Մ. տէր Յովհաննիսեան 5 ղուան, Մարութ Յորգանեանեան 1 ղուան, Պաւլոս Յորգանեանեան 5 ղուան, Շուշան Հայրապետեան 3 ղուան, Մ. Պ. տէր Մկրտչեան 2 ղուան, Գէորգ Մինաս Բօղդեան 1 ղուան, ամն 10 ղուան, Դուկաս Մ. Յ. Նիւթապրեան 1 ղուան, Մարիամ տէր Յ. Գալստեան 1 ղուան, ամն Ն. 10 շահի, Պետրոս Զաքարեան 10 շահի, Եսթեր Յարութիւնեան 5 ղուան, Շաւլէմ Յ. Կոստանդիանոսեան 10 ղուան, Աւետ Գրիգորեան 10 շահի, Սափսոն Տաքրիէլեան 1 ղուան, Վաղարշակ Ա. Վարդանեան 1 ղուան, Մանուկ Յովհաննեան 1 ղուան, Աւետիք Վէռնդեան 10 շահի, Մէլքում Խաչատուրեան 1 ղուան, Գրիգոր Պանիէլեան 1 ղուան, Սիմէօն տէր Գասպարեան 3 ղուան, Գ. տէր Յովակիմեան 10 ղուան, Յովհաննէս Եպդարեան 10 ղուան, Վարդենիք Եպդարեան 5 ղուան, Յ. Պ. Սարգսեան 2 ղուան, Կարապետ Ս. Նահապետեան 5 ղուան, Նիկողայ տէր Գրիգորեան 5 ղուան, ամն 1 ղուան։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՁԱՊԵՏՈՒԹԵՆԷ ՁԵՄԱՐԱՆԻ

1. Գիտութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Հոփևոր Ձեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթէ ի տարւոջ և այն աւուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն Ձեմարանիս մատուսցին իւնդիր յանուն Ա. Հ. Ա. Տ. Ղեպհալէն, ոչ անագան քան զՀնգետասանն Օգոստոս ամսոյ: (Կան. 71 յօդ.):

3. Ընդ իւնդրագրին պարտ առաջի առնել վկայագիրս ուսման, բարւոյ վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Նորեկ աշակերտք և ուսանողք գնիցին ի բժշկէ Ձեմարանիս, որ և տայ Տեսչին գրաւոր տեղեկութիւն գաւոզջութենէ նոցա:

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսանելքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առանձին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Ձեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Ցետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Ձեմարանիս, իսկ վասն մտանելոյ յԱռաջին լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական խորհուրդն:

Ծանօթութիւն: Վասն մտանելոյ յԿ. դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից Էջմիածնի Եկեղեցական-Ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Կաթուղիկոսէն, ի պետս Ընդհ. դպրոցաց:

7. Յանկացողք մտանել յառաջին լսարան Ձեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, եթէ գնիցէ ա-ոյ-ման-ն անցեալ ևթէ ի վերայ ա-ա-ե-լ-ան գոմ մ:

8. Ցետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց, որք արժանաւոր դատիցին Ուսումնական խորհրդոյն:

ուսումնական, Պահանջի զի ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք, երկարոգիք, փափկաճայնք, բարեկազմք և բարերարոյք։

9. *Յ. պատարան ձեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14 – 16 ամեայք, և ըստ այմ Համեմատութեան ի յաջորդ դասարանս։*

10. *Աշակերտք ձեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ Թոշակաւորքն, որք ստանան զուսումն, անուագ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս։*

11. *Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի յայսմ ամի, ըստ բարեհաճ կարգադրութեան Ամենապատիւ Տեղակալին։* (Կանոնադր. յօդ. 83)։

12. *Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս Կովկասեանք 50 րուբլիս, իսկ հակեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ րուբլիս 75, որպէս զի հատուցցի այլ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, և և ի գին կորուսեալ և վատնեալ գրենից, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց։*

13. *Իւրաքանչիւր Թոշակաւոր վճարեսցէ ի տարին րուբլիս 200, ի կրկին նուագս, ի սեպտեմբեր և ի յունուար ամիսս։*

14. *Եթէ Թոշակաւոր ոք ելցէ կամ արձակեսցի մինչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, Թոշակ նորա ոչ դարձուսցի յետս։*

15. *Ցամառնային արձակուրդս, եթէ ծնօղք կամ բարերարք կամիցին տանել գորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց։*

ՏԵՍՈՒՉ ՀԱՅՐԱՊԱՏԻՒ ԱՐՔԻԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՔՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

Հանգէս Գ. տարեգարձի Գէորգեան Ճեմարանի	—	10
Հնութիւնք Հայրենեաց	—	20
Հոմսէական եկեղեցի	—	80
Հանգէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	25
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն լեզուական տեսչաց	—	10
Ձայն բազմաց	—	50
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ժամագրոց	4	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	2	—
Ձայնագրեալ շարականք	30	
Ճանապարհորդութիւն Հակտհաուզէնի	—	80
Ճաշոց	60	—
Մաղթանք վասն Հայրապետի ազգիս	—	20
Մաշտոց Ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցաւելուած Ժամագրոց Ձայնագրեալ	—	20
Նախակրթանք Բ. մասն	—	20
Նոյն Գ. մասն	—	20
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	
Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ	—	20
Պատմութիւն Խաչակրաց	—	20
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	20
Պատմութիւն Հռոմոսի Վանեցւոյ ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
* Պատմութիւն Ստեփանէ վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէոն Ալեմուդիկոսի)	—	50
Սաղմոս Դաւթի	—	50
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	20
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փեար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	20
Օրացոյց (1891)	—	20
Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Ասողանիշ գրեանքն սպառեալ են։
20 տոկոսոց առելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղչուին կը լինի 20%-ին ճանապարհածախքը գնողի վրայ)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու ձանուցանի ի գիտութիւն Տեսչութեանց և առաջնորդաց ի Թեմական Հոգևոր դպրանոցս՝ Թէ՝ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մտանիլ յառաջին Լսարան ձեմարանիս, հետևեալքն են:

ԿՐՕՆ

1. Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ:
2. Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ, ընդարձակ:
3. Սրբազան Պատմութիւն Հին և Նոր Կտակարանիս ընդարձակ:
4. Մանրամասն Աշխարհագրութիւն Վարդապետական, Ցաւհանուր և Դարձից Առաքելոց:

ԼԵԶՈՒՔ

1. Հայոց լեզու, գրաբառ քերականութիւն:
2. Ռուսաց լեզու, քերականութիւն:
3. Ֆրանսերէն լեզու, թարգմանութիւն:

Նկատք ընտրական դպրոցական ձրագրի:

Այսոքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք առաջեալ գոլով վիճակական առարտման դպրոցական ընթացից՝ ցանկան մտանել ի ձեմարան մինչև անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ առաջմանն վիճակականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննել յամենայն առարկայս դպրոցական ընթացից, բայ Ղ-րդ յօդուածոյ ձանուցման Վարչութեանս:

ՏԵՍՈՒԽ ՁԵՄԱՐԱՆԻՆ ԱԱՐԳԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ.